

ՖԵՐԳՈՎՍԻ

« Շ Ա Հ Ն Ա Մ Է »

(ԿՏՈՐՆԵՐ)

1. ՌՈՍԱՄ ԵՒ ՍՈՅՐԱԲ
2. ՌՈՍԱՄ ԵՒ ԱՅԲԱԲՈՒՍ
3. ՌՈՍԱՄ ԵՒ ԷՍՖԱՆԳԻԱՐ

Թարգմանեց

Յ. Զ. ՄԻՐԶԱՅԵԱՆ

1934 թ. Հոկտեմբեր.

ՄՈՂԵՐՆԵ ԹԵՆԻՍԻՆ

891.5

Ք-65

7-65

**ՖԵՐԴՈՎՍԻ**

**« Շ Ա Հ Ն Ա Մ Է »**


(ԿՏՈՐՆԵՐ)

- 1. **ՌՈՍԱՄ ԵՒ ՍՈՅՐԱԲ**
- 2. **ՌՈՍԱՄ ԵՒ ԱՇԲԱԲՈՒՍ**
- 3. **ՌՈՍԱՄ ԵՒ ԷՍՖԱՆԴԵԱՐ**

Թարգմանեց  
**Յ. Զ. ՄԻՐԶՍՅԵԱՆ**  
 1934 թ. Հոկտեմբեր.

Տպարան «ՄՈՂԵՐՆ» Թեհրան

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն



Էս բնու մտադրութիւնն չունէի «Շահնամէ»-ից որիէ բան թարգմանել: Նոյն իսկ ամբողջ ժամանակի ընթացքում, որ ֆերդուստու տօների խօսքը պատուում էր Թէհրանում, այդ պարտաւարը չէր թւում ինձ իրագործելի:

Որքան շատ էինք մօտենում տօնակատարութեան, այնքան աւելի ծանրանում էր ինձ վրայ իմ բարեկամների ճնշումը, թէ ես որպէս պարսկահայ՝ պարտաւոր եմ մի ձեռով մասնակցել Ֆերդուստու տօնին, և իմ ամենաշարմար և ամենատեական մասնակցութիւնը կը լինի այն, որ որոշ կտորներ թարգմանեմ «Շահնամէ»-ից: Այնուամենայնիւ ես շարած էի, թէ «Շահնամէ»-ի վաթսուն հազար տուն բանաստեղծութիւնների այդ ովկիանոսի մէջ որտեղից սկսեմ և որտեղ վերջացնեմ այս կարճ ժամանակամիջոցում, որ կարողանամ մի գիրք արտադրել՝ արժանի մեծ բանաստեղծի հազարամիայ տօնին:

Այսպէս տատանման մէջ էի մինչև այս



4326-2012

սարւայ Յունիս ամուսյ կէսը, երբ մի օր սիկին Մէրզաչիանը, որ ամենից շատ էր ճշտում գործ դնում ինձ վրայ անպայման մի բան թարգմանել անհման դիւցազներգութիւնից, «Շահնամէ»-ն գրեց սեղանիս վրայ իմ առաջ և պահանջեց, որ սկսեմ:

Հասաւ վճռական բոսպէն: Եւ գործի սկսեցի մտածելով, որ կերթամ մինչև ուր որ հասնեմ և կանգ կառնեմ, երբ որ այլևս ժամանակ չուենեամ առաջանալու:

Նախ սկսեցի «Ռոստամ և Էսփանդեար»-ի մենամարտի պատմութիւնը, մի տեղից, որ մի ամիտի պատկեր տամ ընթերցողին և միևնոյն ժամանակ հայերէնի վերածեմ այդ կախարդիչ պատմութեան ամենակարևոր և ամենազիւթական մասը: Դա լինում էր մօտաորայէս 300 տուն և ես մտածում էի, որ այդքանը կը վերջացնեմ մինչև տօները:

Մէկ անգամ որ գործի անցայ, իմ առաջադրած աշխատանքը վերջացաւ շատ աւելի շուտ, քան կարծում էի: Նոյն ժամանակ իմ պարլամենտական ընկերներից ոմանք, որ տեղեկութիւն ունէին իմ ձեռնարկած աշխատանքի մասին, ինձ առաջարկեցին թարգմանել «Ռոստամ և Աշքարուս»-ի

մենամարտի պատկերը, որովհետև այդտեղ, ասում էին իրաւամբ, գանւում է Ֆերզոպուս ամենափայլուն տողերից մի քանիսը և պիտի աշխատել այդ մասի հետ ծանօթացնել հայ ընթերցողին: Տեսնելով որ այդքանը մի կարճ կտոր է, և ժամանակ կուենեամ վերջացնելու, այդ էլ սկսեցի և վերջացրի այնքան շուտ, որ տեսայ զեռ ժամանակ ունիմ մի խոշոր մաս ընտրելու, որը նոյն թափով եթէ աշխատեմ, կը վերջանայ մինչև տօները:

Ապա սկսեցի «Ռոստամ և Սոհրար»-ի պատմութիւնը\*) մի տեղից, որ 800 տուն պիտի թարգմանէի վերջացնելու համար: Այդ մասն էլ առաջ պնաց նոյն թափով, ինչ որ նախկինները, մինչև Օգոստոս ամուսայ կէսը, երբ հասարակական մի անխուսափելի խնդիր, որի պատճառով պէտք էր ինձ կատարել նաև մի ճանապարհորդութիւն, եկաւ հրամայարար վերջակէտ դնելու իմ գրական աշխատանքին: «Ռոստամ և Սոհրար»-ի պատմութիւնից Օգոստոսի կէսից մինչև հիմա, որ սեպտեմբերի վերջն է, չա-

\*) Այս գրքոյի մէջ այդ երեք պատմութիւնները դասուորւած են ժամանակագրական կարգով. առաջ «Ռոստամ և Սոհրար», ապա «Ռոստամ և Աշքարուս» և վերջը «Ռոստամ և Էսփանդեար»: Ի Բ.

փառանց զբաղմունքի պատճառով ոչ մի տուն չեմ կարողացել թարգմանել, և, ի մեծ ցուլ իմ, այդ կտորը մնաց կիսատ:

Ես նպատակ ունիմ հետադասում, երբ ժամանակը չի լինի այսքան սուղ, տալ «Ռոստամ և Սոհրար»-ի, ինչպէս և «Ռոստամ և Էսֆանդեար»-ի պատմութիւնը ամբողջութեամբ սկզբից մինչև վերջ, տաանձին գրքոյկով:

Ներողութիւն խնդրելով ընթերցողից՝ պատմութիւններից մէկը կիսատ թողնելու համար, առիթից օգտուում եմ հրատարակութեն շնորհակալութիւն յայտնելու բոլոր նըրանց, որոնք խրախուսել են ինձ այս գործում և մանաւանդ Հրատարակչական Մարմնին, որ յօժարակամ, անվարան և արագ ձեռնարկից այս աշխատանքի ապագրութեանը, որպէսզի ժամանակին պատրաստ լինի ֆերդովսու սօսների համար և հայ ընթերցողը կարողանայ ծանօթանալ «Շահնամէ»-ի մտքերից մի քանիսի հետ՝ իմ թող գրչի միջոցով:

Յ. Զ. ՄԻՐԶԱՅԵԱՆ

Որովհետև ես «Ռոստամ և Էսֆանդեար»-ի պատմութիւնը նրա վերջին մասից եմ սկսել՝ ընթերցողին տալու համար այդ պատմութեան ամենագրաւիչ կտորը և որովհետև եթէ սկզբից սկսած լինէի, չէի կարող այդքան կարճ ժամանակում ամբողջ պատմութիւնը, որ մօտաւորապէս 3000 տուն քանաստեղծութիւն կը լինի, վերջացնել, հետևարար խնդրեցի իմ բարեկամ Աբդ-օլ-Վահաբ իսան Ալ Հօսէյնի-Ղայէմ-Մլամին, որ յայտնի ֆերդովսիարան է, խիստ հմուտ պարսկական գրականութեան և գրեթէ ամբողջ «Շահնամէ»-ն գոց գիտէ, համառօտ պատմութիւնը գրել «Ռոստամ և Էսֆանդեար»-ի սկզբից մինչև այնտեղ, ուրկից ես եմ սկսել թարգմանել քերթւածը: Այսպիսով ընթերցողը դիւրութիւն կունենայ հասկանալու որոշ ակնարկներ իմ թարգմանութեան մէջ, որոնք կապ ունին պատմութեան ըսկզբնական մասի հետ, որ ես չեմ թարգմանել:

«ՌՈՍԱՄ ԵՒ ԷՍՖԱՆՂԵԱՐ»-Ի  
 ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



Գոշթասը՝ Պարսկաստանի թագաւորը, որդիին է Լոնրասըի, որը Քէյ-Սոսրովից յետոյ ժառանգեց նրա դահը, Հոսովմում եղած ժամանակ ամուսնացաւ կայսեր աղջկայ հետ, որ Քեթայուն էր կոչուում, և նրան Պարսկաստան բերեց: Գոշթասը այս կնոջից երկու որդի ունեցաւ, մէկը Էսֆանդեար և միւսը Փոշութան:

Ջրագաշտի կրօնքի յայտարարութեան ժամանակ Էսֆանդեար մեծ ծառայութիւններ արեց և Թուրանի դէմ պատերազմի մէջ նշանաւոր յաղթութիւններ տարաւ, մինչև այն աստիճան, որ Գոշթասը սկսեց կասկածել նրա վրայ: Այդ կասկածանքի վրայ աւելացաւ նրա միւստարներից մէկ, երկուսի չարախօսութիւնն ևս, և հայրը ի վերջոյ որդուն Գոմբէզան-Դէթում բանտարկել տրւեց:

Արջասը՝ Թուրանի թագաւորը, հէնց որ լսեց թէ Էսֆանդեար բանտարկւած է,

մեծ զօրքով եկաւ Իրանի դէմ և Բալխը, որ Պարսկաստանի մայրաքաղաքն էր, աւերակ դարձրեց և Գոշթասըի հօրը՝ Լոնրասըին ըստպանեց: Գոշթասը, որ այդ ժամանակ Ջաբուխասնումն էր գտնուում, լուրն աննկուղ պէս, զօրքով եկաւ Թուրան, Արջասըի հետ կռեց և պարտութիւն կրելով փախաւ լեռները և այնտեղ ապաստան գտաւ:

Առիթից օգտուելով, Էսֆանդեարի բարեկամները առաջարկեցին Գոշթասըին ազատել Էսֆանդեարին և նրան օգնութեան կոչել թուրանցիների դէմ: Գոշթասը ընդունեց այս խորհուրդը և իր վստահի մարդկանցից մէկին ուղարկեց Էսֆանդեարին բերելու, որը շատ բանակցութիւններից յետոյ համոզեց վերագառնալ իր հօր մօտ:

Էսֆանդեար, վերագառնալուց յետոյ չեց Արջասըի դէմ, փշրեց նրա զօրքը, մինչև Թուրքեստան հալածեց նրան ու վերադարձաւ:

Որովհետև Արջասը, Բալխի վրայ յարձակւած ժամանակ Գոշթասըի երկու աղջրկան, որ Էսֆանդեարի քոյրերն էին հօր կողմից, զերի էր տարել Թուրան, Գոշթասը

Էսֆանդեարին պարտադրեց զնալ Թուրան, իր քոյրերին ազատել գերութիւնից և իր պապի արեան վրէժը լուծել ու վերագանալ: Նրան նաև խոստացաւ, որ երբ յաղթութեամբ վերադառնայ, նա թագը կը յանձնէ նրան և ինքը կը հրաժարուի թագաւորութիւնից:

Էսֆանդեար, թագաւորութիւնը ստանալու յոյսով, զօրքով զնաց Թուրան, ծըպտեալ որպէս վաճառական՝ մտաւ Արջաորի մայրաքաղաքը, սպանեց նրան և Թուրանն էլ կցելով Իրանին, վերցրեց իր քոյրերին և մեծ յաղթութեամբ վերադարձաւ Պարսկաստան:

Այս յաջողութիւնից յետոյ նա պահանջեց հօրից, որ իր խոստումը կատարէ և թագաւորութիւնը յանձնէ:

Գոշթասը, որ իր տւած խոստումից զղջացել էր արգէն և մի ճար էր որոնում որպէսզի խոյս տայ իր խոստումն իրագործելու պարտականութիւնից, հարցրեց Ջամասը աստղագէտից, թէ Էսֆանդեարի կեանքը՞ն ո՞ւմ ձեռքին է գտնուում: Ջամասը նրան պատասխանեց, որ Էսֆանդեարի կեանքը Ռոստամի ձեռքումն է:

Գոշթասը, Էսֆանդեարին սպանել տալու համար նրան ստիպեց, որ զնայ Ջարուստան և Ռոստամին շղթայւած բերէ մայրաքաղաք: Էսֆանդեար զնաց Ջարուստան և շատ բանակցուէթիւններից յետոյ, երբ Ռոստամը վճռականապէս մերժեց շղթայի տակ մտնել, նոքա կուեցին, որի հետևանքով Էսֆանդեար սպանեց ու նրա գիակը բերեցին Բալխ՝ իր հօր մօտ: Ասում են՝ նրա գերեզմանը մինչև այսօր էլ կայ Բախուս և առաջ կոչւում էր «Մարդկանց Թագաւորի Գերեզման» (Մազարէ Շահէ-Մարզան): Իսլամութիւնից յետոյ այդ գերեզմանը յայտնի է որպէս «Այու Դամբարան»:

Աւանդութիւնն այսպէս է ասում, թէ Էսֆանդեարի մարմինը կախարդւած էր Ջարագաշաի կողմից, այնպէս որ դարձել էր անխոցելի: Այդ պատճառով էլ կուրի սկըզբում Ռոստամի ոչ մի զէնքը չէր ներգործում նրա մարմնի վրայ, մինչև որ Սիմորդի օգնութեամբ Ռոստամ Չինաստանում գտնում ու բերում է միակ մոշու փայտը, որ

կարող էր խոցել նրան: Դրանով շինում է  
 երկծայրի մի նետ, զարկում է նրա աչքերին  
 և սպանում նրան:

ԱՔԴՕԼ ՎԱՀԱՔ-ԱԼ-ՀՕՍԷՅՆԻ  
 ՂԱՅԷՄ-ՄՂԱՄԻ

«Ռոտամ և Սոհրար»-ի սլասմութիւնը  
 սկզբից մինչև աջնտեղ, որտեղից ես սկսել  
 եմ չափածոյ թարգմանութիւնը «Շահնամէ»-  
 ի, երկար է:

Ռոտամ որսի ժամանակ մտնում է  
 թուրան, որտեղ է մի քանի վայրի էջ, մէ-  
 կը խորտվում, ուտում է, վրան էլ մի կուշա  
 ջուր է խմում ու քնում է: Մի քանի թու-  
 րանցի ձիաւորներ նրա քնած ժամանակ  
 գալիս ու գողանում են Ռոտամի յայտնի  
 Ռախշ ձին: Ռոտամ երբ գարթնում և տես-  
 նում է որ ձին չը կայ, նրա սաքերի հետքը  
 բռնած գնում է մինչև Սամանգան քաղաքը:  
 Սամանգանի թագաւորը նրան ընդունում է  
 մեծ յարգանքով ու հիւրասիրութեամբ: Գի-  
 շերը, երբ Ռոտամ քաշւում է իր առանձ-  
 նասենեակը քնելու, նրա մօտ է գալիս մի  
 շատ չքնաղ կոյս և յայտնում, որ ինքը Սա-  
 մանգանի թագաւորի աղջիկն է, որ հեռից  
 շատ է լսել Ռոտամի համբաւը, սիրահար-  
 ւել է նրա հետ, ցանկանում է լինել նրա  
 կինը և զաւակ ունենալ նրանից: Ռոտամ  
 շատ հաւանում է կոյսին և խոստանում է  
 ամուսնանալ նրա հետ: Հետեւալ առաւօտ

մարդ է ուղարկում Մամանգանի թագաւորի մօտ և խնդրում է նրա աղջկայ ձեռքը, որը և սրբում է նրան մեծ յօժարութեամբ:

Ամուսութիւնը կատարուում է և թահմինէն — այսպէս է լինում աղջկայ անունը — յղանում է Ռոստամից:

Ռոստամ այդ ժամանակ ստիպւած լինելով վերադառնալ Պարսկաստան, իր կնոջը տալիս է յայտնի գոհարեղէն զարդեր, որ նա տայ իր դաւակին, երբ մեծանայ և ուղարկէ նրան իր հօր մօտ: Եթէ աղջիկ լինէր զաւակը, գոհարեղէնը պիտի կրէր իր մազերի մէջ, իսկ եթէ աղայ լինէր, պիտի կապէր իր թիւին և այդ նշանով Ռոստամ պիտի ճանաչէր իր դաւակին: Ծնւում է մի աղայ և մայրը նրա անունը դնում է Սոհրար:

Տղան մեծանում և դառնում է այնքան հզօր, որ տասը սարեկան հասակում արգէն սախլեմներ է սպանում: Հասնելով գիտակցութեան՝ մօրից հարցնում է թէ ո՞վ է նրա հայրը: Մայրը պատմում է մանրամասն կերպով, թէ ինչ աշխարհահոյակ մարդ է նրա հայրը և յանձնում է աղային նրա հօր աւանդ թողած գոհարեղէնը:

Սոհրար, առնելով այս բոլոր տեղեկութիւնները, անմիջապէս վճռում է զօրք հաւաքել, արշաւել Պարսկաստանի վրայ, սպանել Քալուսին և իր հօրը դնել Պարսկաստանի գահի վրայ ու նրա հետ միասին աիւրել ամբողջ Իրան և թուրանին:

Աֆրասիար՝ թուրանի թագաւորը, երբ լսում է, որ Սոհրար ուզում է արշաւել Պարսկաստանի վրայ, շատ ուրախանում է, ուղարկում է նրան բաւական օգնական զօրք, պատերկրելով իր զօրականներին, որ խիստ գողտնի պահեն Սոհրարից, թէ նա Ռոստամի որդին է, որպէսզի Սոհրար մենամարտի մէջ սպանէ Ռոստամին և Աֆրասիար կարողանայ դիւրութեամբ տիրել Իրանին: Նա մտածում է, որ եթէ Ռոստամ սպանէ Սոհրարին, այդ ցաւը նրան այնպէս կը կտորէ, որ այլևս կռի համար կը դառնայ անպէտք, և երկու դէպքում էլ Աֆրասիար հասած կը լինի իր նպատակին:

Սոհրար արշաւում է դէպի Պարսկաստան, որի սահմանագլխի բերդը զրաւում է առանց դժւարութեան և զերի է վերցնում Հաջիրին, որ բերդի հրամանատարն էր,

ԺԿ

Այս ժամանակ արդէն լուր է հասնում  
Քաղուս արքային, որը մեծ զօրք հաւաքե-  
լով գալիս Սոհրաբի դէմ. և այս կէտից էլ  
սկսում է մեր թարգմանութիւնը, որ դըժ-  
բախտաբար մնաց կիսատ:

Յ. Զ. ՄԻՐԶԱՅԵԱՆ

ՌՈՍԱՄ ԵՒ ՍՈՅՐԱԲ

ՔԱՎՈՒՍ ՇԱՅԸ ՋՕՐՔ Է ՀԱԻԱ-  
ՔՈՒՄ ԿՈՒԵԼՈՒ ՍՈՂՐԱԲԻ ԴԷՍ



Արևն երբ որ պատահեց  
Կպրանման վարագոյր,  
Եւ ծածկոցի հանից  
Գրուխը հանեց բոցախոյր,

Քափուս արքան հրամայեց,  
Որ Գիվն ու Թուս քաջարի  
Ծանրը զանգեր խորածայն  
Կապեն մէջքին փղերի:

Դրունքը բացաւ գանձատան,  
Պարէն շնորհեց ձեռնառատ,  
Ու հրահանդեց, որ խփոյն  
Մեկնեն ղօրքերն ՚ի ճակատ:

Հարիւր հազար, համրանքով,  
Ճօշանազգեաց զինաւոր  
Դէպի տեղին բանակի  
Հաւաքեցաւ ձիաւոր:

Ամէն կողմից զօրք եկաւ,  
Կողմից հսկայ մի բանակ.  
Փոշուց նոցա ձիերի  
Մթնեց երկնից արեգակ:

Օղբ դարձաւ մոխրերանդ,  
Ու սև դարձաւ գոյնն երկրի,  
Ցնցւեց Հուճանն իր տեղից  
Ձախից հսկայ զանդերի:

Այն ինչ չուժ էր բանակն  
Իջևանից՝ իջևան,  
Երևան երկնի լուսասփիւռ  
Պատուժ էր մութ մի սաւան:

Փոշու խճից ամպամած  
Ցողում են տէգ ու նիղակ,  
Ինչպէս կայծերն են ցատկում  
Ծուխի միջից մթնորակ:

Այնքան առատ կան այնտեղ  
Դրօշակ ու զէնք բազմազան,  
Եւ ոսկեհիւս ու ոսկեայ  
Այնքան կօշիկ ու վահան:

Եկած լինէր այդ ճամբին  
Կարծես մի ամպ մթամած,  
Եւ կարւանի գլխի վրայ  
Ջնարէկներ անձրեւած:

Տարբերութիւն չուէին  
Այլևս ցերեկ ու գիշեր,  
Եւ չը կային աշխարհում  
Կարծես երկինք ու աստղեր:

Զօրքը զընաց անընդհատ,  
Դէժին հասաւ դա մինչև,  
Հողն ու քարերն աշխարհից  
Դարձան խալառ աներև:

Երկու մզնն մընացած  
Բերդին զըրեց իր բանակ,  
Ցամաքն հագաւ իբր ըզզեստ  
Փիղ ու կօշիկ ու սմբակ:

Դէտն աչալուրջ, թշնամու,  
Մի՛ գոչ իսկոյն արձակեց.  
Եւ Սոհրարին լուր տարան  
Թէ զօրք եկաւ նոր ու մեծ:

Երբ Սոհրարի աղանջին  
Հասաւ լուրն այդ ու այդ ձայն,  
Նստաւ իր ձին ու եկաւ  
Դիտեց բոլոր բանալին այն:

Նա ցոյց աւեց Հուճանին  
Մատով զօրքն այդ բազմազան,  
Մի զօրք անթիւ, որ կարծես  
Ոչ եղբ ունէր, ոչ վախճան:

Հուճան հեռից երբ նայեց,  
Տեսաւ զօրքերն անհամար,  
Շունչը կարծես կապ եկաւ,  
Սիրաբլ գարծաւ գողահար:

Բայց նորա հետ այս ձեռով  
Խօսեց Սոհրար վիթխարի,  
«Սրբից պիտի արտաքսել  
Ամէն մի հետք վեհերի:

«Այս զօրքի մէջ բազմամարդ  
Ոչ մի ուղղակի քաջազարթ  
Դու չես տեսնի, և չը կայ  
Ոչ էլ մի գուրդ ծանրաշարթ,

«Որ դաշտի մէջ արնահեղ  
Գայ ու կանգնի իմ առջև:  
Եւ թող ինձ այժմ, որպէս միշտ,  
Օգնեն լուսինն ու արև:

«Շատ կան մարդիկ այս զօրքում,  
Շատ էլ կայ զէնք շողողուն,  
Բայց գերազանց ուղղակի  
Զը կայ և ոչ մի անուն:

«Պիտի տեսնես, որ արքայ,  
Աֆրասխարի, ևս, բախտով,  
Դաշտն այս ամբողջ կը շինեմ  
Արեամբ լեցուն մի մեծ ծով»:

Սոհրար չըզգաց իր սրտում  
Ոչ կասկածանք և ոչ վախ,  
Այլ ինչպէս կար նախապէս,  
Իջաւ ձիուց սրտուրախ:

Իր ծառայից մատուակ  
Բաժակ ուղեց ու դինի,  
Իսկ թշնամուն չը սեպեց  
Հոգսի անգամ արժանի:

Նստաւ, ուզեց խնջոյքի  
Առատ խմիչք ու բարիք,  
Արքայասէր ռազմիկներ՝  
Խմբւած նորա բոլորաիք:



ՌՈՍԱՍ ԳՆՈՒՄ Է ՍՈՂՐԱԲԻ  
ԲԱՆԱԿԸ ԵՒ ՍՊԱՆՈՒՄ ԺԱՆ-  
ԴԷՌԱԶՍԻՆ



Իսկ միւս կողմում արքայի  
Վարագոյրներն ու վրբան,  
Լայնատարած դաշտի մէջ,  
Բացան բերդի յանդիման:

Այնքան կար մարդ, վրանասքոյ,  
Եւ այնքան շատ տաղաւար,  
Որ լեռներում ու գաշտում  
Կարծես բաց տեղ էլ չը կար:

Երբ աշխարհի երեսից  
Լոյսն արևի հեռացաւ,  
Եւ երբ զիշերն երկրի վրայ  
Փէշն իր քաշեց մթաթաւ,

Ռոստամն հկաւ յահրավան  
Արքայի ձօս արքայից,  
Կուի համար՝ զօտեպինդ,  
Ոսոխի դէմ՝ քինալից:

Ասաց, «Տեսնեմ ինչ կասէ  
Ինձ իմ արքան խեղացի,  
Թէ զուրկ զօտուց, գլխարկից,  
Բերդը գնամ գլխացի,

«Տեսնեմ ինչ մարդ է արդեօք  
Այս նոր հսկան ռազմարար,  
Աւագանիքն ովքեր են,  
Եւ ո՞վ նոցա զօրավար»:

Քավուս ասաց, «Կը սողի  
Քեզ այդպիսի մի մեծ զործ.  
Մընաս հողով միշտ պայծառ,  
Մընաս մարմնով միշտ անխորձ:

«Ետզդանը թող քեզ համար  
Լինի հղօր պահապան,  
Եւ թող վարւի նա քեզ հետ  
Ըստ քս սրաի ցանկութեան»:

Թուրանական տարազով  
Ռոստամ հագաւ մի ծածկոց,  
Ու զաղանապէս գլխացի նա  
Դէպ ամբանխասն այն ամբոց:

Երբ մօտեցաւ ու կանգնեց  
Բերդին մի տեղ մերձակից,  
Լսեց ձայներ ու ժխոր  
Նա թուրքերի ինչոյքից:

Դռնից մտաւ դէպի ներս  
Դիւցազնորդին անվեհեր,  
Ինչպէս արու մի առիւծ  
Դէպի մի խումբ եղնիկներ:

Մէկ մէկ նոցա պետերին  
Նայեց, տեսաւ ամէն մարդ,  
Մորթը նորա թշերի  
Բացեց կարմիր ինչպէս վարդ:

Բարձր էր բազմիւր, նա տեսաւ,  
Այնտեղ Սահրարն ամբակազմ,  
Այն ինչ նորա մէկ կողմում  
Տեղ էր բռնել ժանդեռազմ,

Եւ միւս կողմում էլ Հուման,  
Նժոյգավարժ, քաջարի,  
Մօտիկ նսյնապէս տեղ ունէր  
Բարման՝ նըման մի վաղրի:

Բայց ամենի գահն ու թագ  
Սոհրարն էր միշտ վեհասես,  
Մնւած ուրախ ջրերով  
Նոճի լինէր նա կարծես:

Հաստ էր բազուկն ինչպէս հաստ  
Ազգրեր ունի հոժկու ձի,  
Դէմքը կարմիր՝ արեան պէս,  
Կանջն էլ ինչպէս առիւծի:

Շուրջը նորա խմբւած կան  
Հարիւր հոգի քաջազուն,  
Երիտասարդ, համարձակ,  
Գլխով, սրտով աննկուն:

Յիսուն հոգի կան պատրաստ  
Ձեռքեր ծալած ու հլու,  
Քաջի առաջ բախտամբարձ  
Հրամաններին անսալու:

Նորա թագին մի առ մի  
Փառք են կարգում շարունակի,  
Գովում նորա մատանին,  
Նորա թիկունքն ու հասակ:

Նստած մնաց փահլաւանն,  
Ու իր գիրքից հեռաւոր  
Դիտում էր միշտ Թուրանեան  
Հզօրներին այդ բոլոր:

Այդ ժամանակ դուրս եկաւ  
Մի կարիքով ժանդէտազմ,  
Յանկարծ տեսաւ մի հսկայ,  
Նոճու նման բարձրակազմ:

Իրենց ամբողջ բանակում  
Մէկը չը կայ այդքան մեծ.  
Դիտեց նորան զայրազին  
Եւ վրդովւած հարց տւեց:

Ասաց նորան, «Ո՞վ ես դու,  
Տնւր ինձ իսկոյն պատասխան,  
Մօտ եկ լոյսին որ տեսնեմ  
Ի՞նչ է անունդ ու նըշան»:

Իջաւ ժանդի վզի վրայ  
Բուռնցքի հարւած մի ուժգին,  
Բաժանւեցան իրարից  
Նորա մարմինն ու հոգին:

Կանգնած տեղում ժանդէսագիմ  
Մէկ անգամից չորացաւ,  
Խնջոյք և կամ պատերազմ  
Էլ չէր տեսնի նա բընաւ:

Երբ դաշտ մանկի որոշեց  
Սոհրաբն, արեան ու ռազմի,  
Եւ երբ արդէն մօտեցաւ  
Ժամը նորա մեկնումի,

Ժանդէսագիմին պահանջեց  
Մայրը որ գայ նորա մօտ,  
Տեսել էր նա Ռոստամին  
Ու չէր նորան անձանօթ:

Թագաւորի նա որդին  
Սամանգանի պետութեան,  
Էր պարծեցեալ Սոհրաբի,  
Իբրև քեռին, ազգական:

Ասաց նորան, «Ո՛վ Արի,  
Լինի հողիդ լուսավէտ,  
Անսորձ է խիստ իմ որդին,  
Ե՛կ որ զընտս նորա հետ»

«Որ մեր զիւցազնն երբ հասաւ  
Սամաններին Իրանի,  
Եւ երբ երեսը տեսաւ  
Արիագնապետ իշխանի,

«Որ երբ դաշտում իրար դէմ  
Գրոհեն զօրքեր վրէժխնդիր,  
Հօրը ցոյց տաս զերագահ  
Նորա որդուն զերընտիր»:

Սոհրաբ երկար սպասեց,  
Բայց նկատեց որ արդէն  
Շատ է անցել, ու նորից  
Հանդէս չեկաւ դեռ ժանդէն:

Ու հարց տւեց, «Ո՛ւր զընաց  
Արդեօք ժանդէն մեր անվախ,  
Եւ բարձն իր այս խնջոյքում  
Թողեց այսպէս անըզրալ»:

Եկաւ մի ոք ըշտապով,  
Գտաւ նորան զետնամած,  
Նորա հոգին ու մարմինն՝  
Արդէն վաղուց բաժանւած:

Եկաւ պատմեց Սոհրարին  
Նորա գրութիւն եղկելի-  
Գարձաւ լուրից կեր ու քուն  
Նորա համար թոյնով լի:

Եկան և այլք ու տեսան  
Նորան ընկած կենասպառ,  
Որի համար գոյութիւն  
Չունէր խնջոյք ու մարառ:

Վախատունով ու լացով  
Նոքա նորից յետ դարձան,  
Նոցա սրտերն այլ ցաւից  
Գրւած կարծես հալարան,

Եւ Սոհրարին պատմեցին  
Թէ ժանդէնազմ չը կայ էր  
Ոչ ցնծութեան, ոչ ցաւի  
Էլ չէ կարող մասնակցել:

Սոհրարն երբ որ լսեց այս,  
Պայթեց իրրև հրաբուխ,  
Անմիջապէս ժանդի ձօս  
Վազեց, եկաւ որպէս ծախ:

Ասած իր հետ սարսկներ,  
Մտն ու սուզի նստաբարան,  
Գտաւ, ինչպէս սասցին,  
Փանդին արգէն անկեղան:

Աղջեց խոյտու ու մընաց,  
Իրրև արձան, քաջարին,  
Այլ կոչեց իր բարբ  
Ռազմաձաբաւ քաջերին,

«Ըննու», սասց, «չը պիտի  
Քրնով թմբել այս պեղեր,  
Այլ պէտք է ձեզ, սր սրէք  
Ձեր նիւթակներն ու սրեր:

«Որովհետեւ հօտի մէջ  
Գայլ է մտել անսպոր,  
Գտել է շանն ու հովիւն  
Ազմկալից և անհող,

«Յափշտակել է գաղանի  
Մեր քաջերից մէկ ոչխար,  
Եւ ստաղարիլ դժբախտին  
Արնաթաթախ ու խանարն:

«Թէ Արարիչն, ինչպէս ցարդ  
Գոյ ինձ նորից օգնութեան,  
Հէնց որ սմբակն իմ ձիւս  
Գետին գպաւ վազարգեան,

«Նորա թամբից կը բանամ  
կապն իմ հօր քամանդի,  
Եւ պարսկական բանակից  
Վրէժը կտանեմ ես ժանգի:

«Իսկ պէտք է այժմ մեզանից  
Նսաէ իր տեղն ամէն մարդ»:  
Նստեց ու մօտ հրաւիրեց  
Իր մեծերին քաջամարտ:

Այսպէս անա բոլորին  
Սոհրարն ասաց զխցազուն,  
«Ո՛վ գուք բոլորդ՝ աներկեղ,  
Ո՛վ գուք բոլորդ՝ խնատուն,

«Անհետացաւ իմ գահից  
Թէև ժանդէն քաջորդի,  
Զը յագեցաւ ինձոյքից,  
Սակոյն, ծարաւն իմ սրտի»:

Եւ հրամայեց Հուամանն  
Գինի բերին ցնծալից,  
Եւ զինիով ամէն վիշտ  
՚Ի բաց վանեն բանակից:

Երբ Շահի մօտ վերստին  
Ռոստամ դարձաւ զէպի յեա,  
Իրանական բանակին  
Գիպն էր կանգնած իրրև զէտ:

Տեսաւ ճամբին Ռոստամի  
Մի միջնաշաղ ուրւազիծ,  
Զեւքը տարաւ և իսկոյն  
Սուրը քաշեց պատեանից:

Ինչպէս հուժկու հարրած փիղ  
Գոչ արձակեց ազգարար,  
Զեւքը, թռաւ, սրակալ,  
Ցատկեց զլիսին եւ ասպար:

Ռոստամ իսկոյն հատկացաւ,  
Որ պարսկական բանակի  
Գիշերապաճն ու հակիչ  
Գիպն է կարգւած քաջազգի:

4326-20/2



Առաջ հնչեց մի ծիծաղ,  
Ապա ուժգին աղաղակ,  
Իսկ երբ որ Գիվ Ռոստամի  
Չայնք լսեց համարձակ,

Եկաւ սուքով նորա մօտ,  
Ասաց նորան, «Ո՛վ հօօր,  
Վրէժի գաշտու՞մ՝ առաջնորդ,  
Մեծերի մէջ՝ մեծաւոր:

«Ոտքով մըտեց ես եզել  
Այս գիշերով մթամած»:  
Ռոստամ, իբրև պատասխան,  
Բացաւ շրթունքն և ասաց,

Ինչպէս գընաց ու Քէյվան  
Ծպտեալ մտաւ ապահով,  
Ինչպէս քաջին ապարտիտ  
Իեռին փռեց բուռնցքով:

Նորան կեցցէ ու գովեստ  
Իբովը կարգաց հիացմամբ,  
«Չիցէ», ասաց, «առանց քեզ  
Թե ու թիկունք, ձի ու թամբ»:

Եւ այնտեղից բշտապով  
Վրանը գիմեց շահական,  
Թուրքն ու նոցա խնջոքն էր .  
Նոցա զրոյցի յատրկան.

Նաև Մահրաբն ու նորա  
Թին ու հասակ համաչափ,  
Նորա թիկունքն ու բազուկ,  
Ազգբերն ու կապին նոյակապ:

«Չինար լինի նա կարծես,  
Առոյց, հօօր ու հպարտ,  
Ցարդ չէ կիկ թուրանից  
Մէկ հառ նման ազամարդ:

«Ոչ իսկ Երան, Տաներան  
Ունին նորան զուգակից,  
Սամն է կարծես ձիանխտ  
Եկած այլ իմն աշխարհից»:

Ապա ժանդից խօսեցին  
Եւ այն բուռնցքից որ կերաւ,  
Այնպէս որ վրշտ ու վայելք  
Չի ունենայ նա բընաւ:

Ապա նւագ ու զինի  
Հրամայեցին իրենց ժամ,  
Ու զբաղեցան բանակի  
Սարքով մինչև առաւօտ:



ՀԱՐՑՆՈՒՄ Է ՍՈՇՐԱԲ ՀԱՋԻՐԻՑ  
ՊԱՐՍԻՑ ԲԱՆԱԿԻ ՊԵՏԵՐԻ  
ԱՆՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՆՇԱՆՆԵՐԸ



Երբ արեղակն արթնելով  
Ասպարն առաւ սակեփառ,  
Եւ երբ ցերեկն անըսբօղ  
Դէմքը բացաւ իւր պայծառ,

Սոճրարն հագած վերտին իւր,  
Ու զբանագրեաց բովանդակ,  
Եկաւ մտայլ ու հասաւ  
Ձիւս վերայ կապուտակ:

Մէջքին կապած՝ հնդկական  
Ունէր ազնիւ մի սուսեր,  
Արքայական վերտախոյր  
Գլխին դրած նա ունէր:

Թամբին կապած մի քամանդ՝  
Ծալքերն առաւ իւր բթին,  
Կախւած օղակ և օղակ,  
Դէմքն էլ՝ դաման ու մթին:

Եկաւ շուտով և ընտրեց  
 Կերան բարձրը մի գագաթ,  
 Ուրկից ամբողջ բանակն այն  
 Տեսնել կարող էր ազատ:

Նա հրամայեց որ Հաջիր  
 Ընկերակցէ նորա հետ,  
 Ասաց նորան, «Կորածն  
 Կաւ չէ լինի ոչ մի նեա»:

«Եթէ լինի, չէ կարող  
 Նշան դարկել զա երբեք,  
 Իրեն և իր տիրոջն էլ  
 Մտղւ է մի նեա թիւրաթեք»:

«Ճշմարտութիւնն ունեցիր  
 Ամէն բանում առաջնորդ,  
 Թէ չես ուզում կեանք վարել  
 Յաշտութեան անհապորդ»:

«Ինչ որ հարց աստ, շխտակից  
 Դէպ ճոռութիւն մի գառնար.  
 Պատասխանիր ճշմարիտ  
 Եւ մի փնտթիր սուտից՝ հար»:

«Թէ իմ ձեռքից անվընաս  
 Ուզես վարել ազատ կեանք,  
 Եթէ ուզես վայելիլ  
 Մարդկանց շարքում մեծարանք»:

«Պարսից մասին ինչ հարց աստ  
 Պատասխանիր ճշգրիտ,  
 Թող չը շեղւի գէպի սուտն  
 Ուզիլ շաւղից քս հողի»:

«Եթէ ամէն մի հարցիս  
 Տաս ինձ անսուտ պատասխան,  
 Վարձատրութիւն կ'ստանաս  
 Ինձնից, բարի ամէն բան»:

«Իռ կ'ստանաս ինձանից  
 Գանձ ու գոհար անպակաս,  
 Կանես խալթ մեծարժէք  
 Եւ այլ ինչ որ ցանկանաս»:

«Իսկ թէ փորձես դու գառնալ  
 Դէպի ուզին ստութեան,  
 Շղթան վզիդ՝ ու տնդդ էլ  
 Բանտ կը լինի ցրվախճան»:

Հաջիբ իսկոյն Սոհրարին

Պատասխանեց, «Արքայ տէր,  
Զօրքի մասին Իրանի  
Ինչ տալ ուղես ինձ հարցեր,

«Ինչ որ գիտեմ, ես անշուշտ  
Կը տամ անսուտ պատասխան,  
Ինչի՞ն է պէտք որ ընտրեմ  
Ես ճանապարհ կեցածութեան:

«Ճշմարտութեան հետևորդ  
Պիտի դանես ինձ ընդմիջա,  
Միտքըս անգամ չէ թեքում  
Դէպ կեղծ մի բան կամ անճիշտ:

«Ճշմարտութեան պէս լու բան  
Չունի ամբողջ այս աշխարհ,  
Ստութիւնից էլ նոյնպէս  
Չունի ոչինչ նա վստօթար»:

Ասաց Սոհրարն, «Ապա քեզ  
Ես հարց կը տամ ամէն բան,  
Ո՞րքան է դօրքն, ո՞վ է Շահն,  
Ո՞վ բարձր ունի աստիճան:

«Ճիշտն ինձ ասն, ովքեր են  
Մեծաւորներն այն երկրի,  
Ո՞րն է Քալուս, ո՞րն է Թուս,  
Ո՞րն է Գուգարդ քաջարի:

«Իրանի մէջ որոնք են  
Փահլավաններ ու քաջեր,  
Ո՞րն է արդեօք Գոսթահամ,  
Եւ ո՞րն է Գիվ անվեհեր:

«Տնւր Բահրամի նըշաններն  
Ու մեծանուն Ռոստամի,  
Եւ որ մէկից որ հարց տամ  
Ճիշտն ինձ ասն մի առ մի:

«Ամէն մէկի մասին տնւր  
Տեղեկութիւն ճշգրիտ,  
Եթէ ուղես որ մընայ  
Գլուխըդ կտած քո մարմնիդ:

«Վըրանասքօղն այն մետաքս  
Բազմապիտի, դունագեղ,  
Որ վրաններ ունի մեծ  
Վազրի մորթուց իր մէջտեղ:

« Որի առաջ հարիւր հաս  
Փիղ կայ հակայ ու վայրագ,  
Վրանուժ գրւած կայ մի գահ  
Կեդակի պէս կապուտակ,

« Վրանի գլխին կայ մի դրօշ,  
Վերան արև կայ գեղին,  
Չողը գոյնով մանուշակ,  
Ծայրին՝ սակեայ մի լուսին,

« Զօրքի մէջտեղ զեանդւած,  
Որինն է վրանն այն շքեղ-  
Պարսիկներից այդ վրանուժ  
Ո՞ր մէկն ունի բնակատեղ»:

Ասաց Հաջիր, « Եանն է գա,  
Աշխարհատէրն Իրանի,  
Որ առլուծներ ու փղեր  
Ունի շէմքին վրրանի»:

Նորից Սահրաբ հարց տեղի,  
« Աջակողմուժ հեռաւոր  
Կան շատ փղեր ու բեռներ,  
Եւ բազմաթիւ ձիաւոր:

« Մի վրանաբակ կայ մեխւած  
Ամբողջը սև վարագոյր,  
Շուրջը՝ զօրքեր շաբէ շար,  
Ու գրան կայ շատ և շատ խոյր:

« Կան չորս կողմուժ վրրաններ,  
Ամէն հաշւից առաւել,  
Փիղ և աւիւծ նորս մօտ  
Մէջք են կարծես խոնարհել:

« Բարձր է ծփում փղատիպ  
Դրօշը նորս գլմայի,  
Կօշիկներով սակեթեղ  
Այնտեղ կայ շատ այրուձի:

« Ի՞նչ է անունն այն մարդու,  
Ո՞վ է նորան նախահայր,  
Սահմաններում Իրանի  
Ո՞ւր է նորս բնակավայր»:

Տւեց Հաջիր պատասխան,  
« Թուան է յայտնի գա Նազար,  
Ծանօթ ունի նա դրօշակ,  
Վերան փղի կայ նկար:

«Սերւած է նա մեծափառ  
Ծընողներէյ թագակիր,  
Հըպարտագլուխ զօրավար,  
Եւ դաշտի մէջ՝ վրէժխնդիր:

«Ձէ դիմանում առիւծն իսկ  
Փայլին նորա սուսերի,  
Նորա դիմաց խոնարհում  
Գլուխը բոլոր մեծերի»:

Սոհրաբն հարցրեց վերըստին,  
«Ո՞ւմն է վրբանն այն կարմիր,  
Որի առաջ ոտքի վրայ  
Կանգնած է մի դիմակիր:

«Գոյնը գրօշի մանուշակ,  
Մէջն առիւծի մի սլաակեր,  
Իսկ մէջ ակզում կարծես թէ  
Թափւած լինին գոհարներ:

«Այն ինչ վրանի յետևում  
Զօրքանակ կայ խոշոր,  
Ճօշան հագած բոլորն էր  
Եւ բոլորն էլ տէրաւոր:

«Պատասխանիր ինձ ճշտիւ,  
Ո՞ւմն է վրանն այդ մեծասպաս,  
Չիցէ թէ սուա խօսքերով  
Գլխիդ բերես պատուհաս :

«Այտանու պեան ու փառք»,  
Ասաց, «Գուգարդ զօրաւոր  
Տէրն է վրանի այդ կարմիր  
Արիագններով իր բոլոր:

«Հրամանատար է նա մեծ,  
Կուսում՝ առանց երկիւղի,  
Ութուան սրդի ունի նա  
Առիւծի պէս ու փղի:

«Այն ինչ փիղն էլ կուրի մէջ  
Նորա հանդէպ չէ արի,  
Անվախ չէ վազըը դաշտում,  
Եւ ինձը չէ լեռների»:

«Ո՞վ է», գարձեալ հարց տւեց,  
«Տէրն այն կանաչ վրբանի,  
Ոտքի կանգնած նորա մօտ՝  
Մեծամեծներն իրանի:

«Վրանի մէջտեղ, թանկագին  
Մի գահ ամուր կայ զբւած,  
Եւ Գալիանի տապալարդ  
Կայ մի զբօշակ իր զխնայ:

«Գահի վերայ կայ բազմած  
Մի փահլաւան փառահեղ,  
Նա տեսք ունի վեհապանծ,  
Ի՞նչու՞նք ունի նա զօրեղ:

«Տես, այն մարգուց, որ նորա  
Գիմաց սաքի է կանգնել,  
Ինքը նստած՝ մէկ գլխով  
Բարձր է միւսից տաւել:

«Նորա հանդէպ կայ կանգնած  
Մի ամենի երէվար,  
Ես չեմ տեսել սչ մի ձի՞  
Լինի զսրան հաւասար:

«Երբեմնակի մի խրխինջ  
Իուրս է նետում ինքն իրան,  
Ձի չէ թւում, այլ կարծես  
Ետում լինի մի ուկիան:

«Նորա վրանի բոլորաիք  
Կան շատ փղեր զբահաւոր,  
Ցատկում է մերթ այդ մարդուց  
Մի մոնչիւն անաւոր:

«Նորա հասակն ունեցող  
Ոչ ոք չը կայ Իրանում,  
Կայ նորա մօտ մի քամանդ,  
Որ մինչև սաքն է հասնում:

«Վիշապ ունի նկարւած  
Որպէս նըշան զբօշակի,  
Կայ սակեղլուխ մի առիւծ  
Ծայրին զբւած նիղակի:

«Ո՞վ է արդեօք, ասան ինձ,  
Այդ փահլաւանն անսովոր,  
Որ մոնչում է յաճախ  
Իբրև առիւծ հրազօր»:

Հաջիրն սպա մի բոպէ  
Այսպէս խորհեց ինքն իրան,  
«Եթէ ես այդ հսկայի  
Ասեմ անուհն ու նըշան,

«Այս ուղղմիկին բարեխիրս  
— Սակայն հօօր թշնամի —  
Գուցէ յանկարծ մի չարիք  
Բերէ գլխին Ռոստամի:

«Լաւ է ուրեմն այս խորհուրդն  
Ընդմիշտ պահեմ եւ թաքուն,  
Եւ չը յիշեմ նորանից  
Ոչ մի նըշան կամ սնուն:»

«Չինաստանից», սասց նա,  
«Բարի մի մարդ անծանօթ,  
Նըպատակով մեզ անյայտ  
Նոր է եկել շահի մօտ»:

Անունն ուղեց իմանալ  
Չինաստանցու այդ նորեկ,  
Իսկ նա աւեց պատասխան  
Որ, «Չը գիտեմ եւ երբեք»:

Սակայն Սոհրար Հաջիրից  
Հարցրեց երս մի անգամ,  
«Այդ չինացու գէթ անունն  
Ասն, որ եւ իմանամ»:

Սասց Հաջիր պահելով՝  
Սակայն խորհուրդն իր թաքուն,  
«Ո՛վ առիւծներ դու զսպող,  
Ո՛վ մեծագործ դիւցապուն,

«Երբ նա եկաւ շահի մօտ,  
Փակեաճ էի այս բերդում,  
Ինձ իմանալ հընար չէր  
Նորա անունն ու ծագում:

«Ըստ իս, մարտիկն այդ հօօր  
Պիտի լինի չինացին,  
Քանզի նորա զրահն ու սարք  
Նոր են բոլորն իր հագին»:

Այս խօսքերից Սոհրարի  
Սիրտը զարձաւ խիստ տխուր,  
Որ Ռոստամի նա մասին  
Ձեռք չը բերեց ոչ մի լուր:

Որդին, մօրից նշաններ  
Շատ էր լսել հօր մասին,  
Տեսնում էր այժմ և սակայն  
Չէր հաւատում իր աչքին:

Ուզում էր, բայց, Հաջիրի  
Բերնից լսել նոյն խօսքեր,  
Որ նախադէս լսածին  
Սրտով հաւատ ընծայէր:

Բայց ճակատին ուրիշ բան  
Ունէր գրած օրահաս,  
Եւ այդ գրից չի լինի  
Ո՛չ աւելին, ո՛չ պակաս:

Ճակատագիրն երկնքից  
Երբ ցած փռեց թևերն իր,  
Դարձան խաղառ կոյր ու խուլ  
Խելացիներն անխտիր:

Յետոյ հարցրեց նորանից,  
Թէ «Մեծերից ո՞րն է այն,  
Որ մէկ կողմում վրանասքօղ  
Ունի շքեղ և ընդլայն:

«Շատ կայ այնտեղ ձիաւոր  
Եւ բազմութիւն փղերի,  
Լսւում է արդ այնտեղից  
Հոսժկու մի կող շեփօրի:

«Գայլանըման մի դրօշակ  
Կայ փողփողուն իր դիմաց,  
Ծայրը նորա սակեղէն  
Մինչև երկինք բարձրացած:

«Վրանի մէջտեղ բարձրագիր  
Կայ մի գահոյք սակետար,  
Նորա դիմաց սաքի վրայ  
Կան ըստրուկներ շարէշար:

«Ասն տեսնեմ, այդ մարդու  
Ի՞նչ է պաշտօնն Իրանում,  
Ի՞նչ է անունն, ու զիրքն ի՞նչ,  
Ումից ունի նա ծագում»:

Ասաց, «Որդին Գուգարգի՛  
Գիվ է անունն իր ազնիւ,  
Ռազմիկներէ շրջանում  
Յայտնի որպէս Անվախ Գիվ»:

«Նա, Գուգարգի տոհմի մէջ  
Մեծ է ու լաւն ամենից,  
Պեա է երկու պատճառով  
Բանակներում նա Պարսից:

«Փեսան է նա Ռեատամի,  
է եւ տոհմիկ ռազմարար,  
Քիչ կայ Պարսից աշխարհում  
Դիրքով նորան հաւասար»:

Սոհրարն ասաց, «Այն կողմից  
Որ բարձրացաւ արեգակ,  
Տեսնում եմ ես պարզօրէն  
Մի վարագոյր ըսպիտակ:

«Ռումի մետաքս հագուստով՝  
Բոլորն հեծած երիվար,  
Շարան կանդնած կան մարդիկ  
Աւելի քան մէկ հազար:

«Ասպարաւուր, տիղազէն  
Մի դօրախումբ հետեակ,  
Կարծես անկզբ ու անթիւ  
Բռնել է գաշան ընդարձակ:

«Նորա մետաքս հագուստից  
Ի՞նչ գեղեցիկ մի պատկեր,  
Խումբ-խումբ կեցած չորս կողմում  
Ի՞նչ բազմաթիւ ըստրուկներ:

«Ի՞նչ է անունն այդ մարդու,  
Մարդկանց շարքում անւանի,  
Ո՞ր մեծութիւնն է ազբիւրն  
Ազնիւ նորա արիւնի»:

«Կոչիւր նորան Ֆարիբորդ»,  
Պատասխանեց արզ շաջիւր,  
«Ի՞նքը մի թագ քաջերի՝  
Ծընոյ ունի թագակիր»:

Սոհրարն ասաց, թէ «Փառքն այն  
Կաւ է անշուշտ ռազմական,  
Որ երբ գաւակն արքայի՝  
Ինքն էլ լինի թագարժան»:

Հարցրեց նոյնպէս շաջիւրից  
Վրանի մտին դեղնօրակ,  
Որի տաջ կար ցցւած  
Ծածանափայլ մի գրօշակ:

Իսկ այդ գրօշի չարս կողմում  
Փողփողալիս ամէն տեղ,  
Դեղին, կարմիր, մանուշակ  
Կաշին գրօշներ գունազեղ:

Իսկ յետևում կար մի գրօշ,  
Վերան վարազ կատաղի,  
Գլխին լուսին արծաթեայ  
Կախւած բարձր մի ձողի:

«Պետերի մէջ գլխամբարձ  
Ի՞նչ են նորան անւանում,  
Որ տանջանքի, վշտի մէջ  
Չունի բընաւ այլայլում»:

Հօրիցն էր նա որոնում  
Որևէ լուր կամ նըշան,  
Հաջիր պահեց գաղանիքն այդ  
Ոչինչ չտասց նա նորան:

Աշխարհ սարքել չես կաբող,  
Նա ինքն իրան է սարքւած,  
Կայ և սարքւած կը քնայ  
Ինչպէս սարքել է Աստուած:

Ճակատագիրն այլ վճիռ  
Դըբած ունէր նախապէս,  
Պէտք է, ինչպէս նա դըբեց,  
Այնպէս գընես ու անցնես:

Սիրաբղէ եթէ կապեցիր  
Այս աշխարհին անցաւոր,  
Պիտի գտնես ամէն բան  
Վիշա ու տանջանք թունաւոր:

Հըպարտագլուխն՝ Հաջիրից  
Կրկին հարցրեց ու կրկին,  
Նորա մասին, որ տեսնել  
Փափայ ունէր նա ուժգին:

Վրանի մասին այն կանաչ,  
Զիւռ մասին այն հօբոր,  
Օղակ-օղակ քամանդի  
Այնտեղ ընկած բաղմոյսր:

Հաջիր տասց Սոհրաբին,  
«Ո՛վ իմ արի զօրավար,  
Գաղել քեզնից իսկութիւնն  
Օգուտ չունի ինձ համար:

«Եթէ ես ցարդ չինացու  
Անունը քեզ չեմ տակր,  
Պատճառն այն է պարզապէս,  
Որ չը գիտեմ ես ինքս էլ»:

Սոհրաբ ասաց, «Ձէ թւում  
 Որ սա լինի ուղիղ բան,  
 Դու յիշեցիր ամենին,  
 Ձը յիշեցիր դու նորան:

«Լինի ամբողջ աշխարհի  
 Միակ հսկան մեծանուն,  
 Եւ այսպիսի բանակում  
 Մընայ անյայտ ու թաքուն:

«Դու ասացիր զօրքի մէջ  
 Մեծ է իբրև զօրավար,  
 Նորա խնամքին է յանձնւած  
 Ամէն նահանգ ու գաւառ:

«Այն դաշտի մէջ որ Բավուն  
 Դուրս գայ կուի ժամանակ,  
 Փըղի վերայ բեռնելով  
 Շարժէ իր դահն ու իր թագ,

«Աշխարհաստատ փահլավանն  
 Առաջագահ զօրքերի  
 Պիտի լինի, երբ գաշտում  
 Շըռինդ պայթէ սլայքարի»:

Հաջիր ապա Սոհրարին  
 Այսպէս տւեց պատասխան,  
 «Մենք չը դիտենք, մի գուցէ  
 Առիւծակալ այն հսկան,

«Հիմա պտոյտ է գործում  
 Ձքնաղ երկրում՝ Չարոլի,  
 Եւ ծաղկաբոյր վայրերում  
 Խնջոյք սարքում հաճելի»:

Սոհրաբ տւեց պատասխան,  
 «Դ՞նչ ես ասում անխմաստ,  
 Դաշտում լինի բանակած  
 Արքան զօրքով իր պատրաստ,

«Եւ փահլավանն աշխարհի  
 Սարքում լինի խնջոյքներ:  
 Կը ծիծաղեն այդ խօսքիդ  
 Թէ պատանի և թէ ծեր:

«Մէկ է և նոյնն այսօր էլ  
 Բեղ հետ պայմանն իմ հաստատ,  
 Ասում եմ քեզ որ լսես,  
 Եւ ասելիք չունիմ շատ:

«Թէ փահլավան Ռոստամի  
Տեղն ու նշանն ինձ յայտնես,  
Յարգանք կառնես ամէն տեղ  
Եւ ամենից մշտապէս:

«Այնպէս կանեմ, որ ոչինչ  
Էլ չունենաս դու թերի,  
Եւ կը բանամ քեզ համար  
Գազանի դռներ գանձերի:

«Սակայն եթէ ինձանից  
Գազանի պահես խորհուրդնայդ,  
Եւ խկութիւնն ինձ այսօր  
Ձը հաղորդես բացայայտ,

«Վստահ եղիր, որ մարմնիդ  
Գլուխդ կպած չի մեռչ,  
Այս երկաթից որն ուղես  
Ազատ ընտրիր դու հիմա:

«Մոզպեան, արդեօք, չե՞ս լսել,  
Թագաւորին ինչ ասաց,  
Երբ խորհուրդներ նորա մօտ  
Բացու, ցայսօր թաղուած:

«Նոյնն է ինչ որ մարգարիտ  
Չասուած մի խօսք», ասաց նա,  
«Թէ չը ծակուի, դեղազարդ,  
Ու թանկ շարան չի դառնայ:

«Երբ փախանք ից, թաքստից,  
Գոհարն իսպառ ազատուի,  
Յետոյ անգին դառնալով՝  
Փայլ կըստանայ արևի»:

Սակայն Հաջիր Սոհրաբին  
Այսպէս տւեց պատասխան,  
«Երբ կշտանայ իր կեանքից  
Գահ ու թագից իմ արքան,

«Մէկի դիմաց աշխարհում  
Կուզէ մտնել ՚ի գուպար,  
Որ կատաղած փղի դէմ  
Հրեշտակ է նա հոգէսու:

«Եթէ նորա ճիրանի  
Տեսնես դու ոյժն ու սարսափ,  
Նորա թիկունք, նորա բաշն  
Ու անսելի նորա թափ,

«Կըզգաս որ չի ազատւի  
Նորա ձեռքից անարկու,  
Ո՛չ մի առիւծ, ո՛չ մի զև  
Եւ ո՛չ վիշապ մի արու:

«Նա իր գուռով հարւածով,  
Որ կը փշրէ նոյն խակ սար,  
Երկու հարիւր մարդախոււմը  
Գիտէ փոսկ գիթաւար:

«Նա որի դէմ դաշտի մէջ  
Ռոստամ լինի մրցակից,  
Գլուխը կիջնէ հողի տակ  
Նոյն խակ երկնի բարձունքից:

«Փիղը կանգնել չէ կարող  
Նորա դիմաց ախոյեան,  
Նեղոսն անգամ չի լինի  
Զիւլ փողին աննըշան:

«Կազմը նորա ոյժ ունի  
Հարիւր մարդու հաւասար,  
Բարձր է զուխն աւելի  
Բարձրասաղարթ քան մի ծառ:

«Երբ որ կուի ժամանակ  
Գաշա է մտնում զսյրացած,  
Թէ մարդ, թէ փիղ, թէ առիւծ  
Են նոյն բաներն իր դիմաց:

«Ձեմ ցանկանում նորա դէմ  
Պատերազմի գաշտը գար  
Մի լեռ, թէկուզ գա լինէր  
Ամբողջովին վիմաքար:

«Ձայնը նորա սխրանքի  
Ամբողջ աշխարհն է բռնել,  
Եւ իշխաններն ազգերի  
Շատ լաւ գիտեն ըստն էլ:

«Կուի մանկ նորա դէմ  
Չէ քեզ համար ձեռնտու,  
Երբ մանաւանդ հնդկական  
Քաշէ սուսերն իր հատու:

«Դու աշխարհում չես տեսիլ  
Դեռ սագթիկներ քաջավարժ,  
Որոնց ուսին գուռզեր կան  
Փայտի նման ծանրաշարժ:

«Մարդիկ, ինչպէս Աֆրասիաբ  
 Ու չինացին զօրավար,  
 Նոյնպէս Քուբան աշխարհի  
 Ամէն յայտնի ռազմարար,

«Դոցա գլխին և իրանց  
 Բազմահազար զօրքերի  
 Ռոստամ կրակ է թափել  
 Շողշողանքովն իր սրի»:

Ազատորդին Սոհրարն արգ  
 Այսպէս աւեց պատասխան,  
 «Դժբախտ լինի Գուդարդի  
 Եւ Քէշվադի գերդաստան,

«Որոնք ուզեն կամ չուզեն  
 Պիտի կոչեն քեզ սրդի,  
 Քո այդ խելքով և ոյժով,  
 Քո գործերով ամարդի:

«Ե՞րբ ևս տեսել ռազմիկներ  
 Զարգանդաւոր, յաղթանդամ,  
 Դու, որ ձիանց սմբակի  
 Դեռ չես լսել ձայնն անգամ,

«Որ Ռոստամի պատմութիւնն  
 Առած բերանդ անպաղար,  
 Նորա գովեսան ևս երգում  
 Հիացմունքով ինձ համար:

«Այն ժամանակ կը տեսնես  
 Երբ որ հասայ ևս նորան,  
 Ինչպէս անգուսպ փոթորկից  
 Դողալ գիտէ մի ովկիան:

«Իսկ դու կրակից ու կուէց  
 Այնքան սատիկ վախ ունիս,  
 Որ կը գողայ հանգիստ ծով  
 Երբ քեզ տեսնէ գողալիս:

«Երբ որ կանաչ ովկիանոսն  
 Եղաւ տեղից տեղահան,  
 Չի գիմանայ ոչ մի հուր  
 Այլևս նորա յանդիման:

«Բացի մահուան սնկազնից  
 Չունի խաւարն ապաւէն,  
 Երբ որ իր սուրն արեգակ  
 Դուրս է քաշում բոցեղէն»:

Երբ որ տասց խօսքերն այս  
Սահարն արի, բանիմաց,  
Ինքը տխրեց իր ներսում  
Եւ խորագէտ մամտաց:

Մինչ Հաջիրի գլխի մէջ  
Անցան մտքիւր այսպիսի,  
«Եթէ ցոյց տամ նըշաններն  
Ասիւծաստատ հերոսի,

«Հաստարագուհ, ամրակուտ,  
Այս վրիթիարի Թուրանցուն,  
Արքայական այս բաշով  
Եւ այս կողմով աննկուն,

«Զօրքի միջից կուկուտ  
Կը հրաւիրէ սասկ նորան,  
Կը պահանջէ որ իբ դէմ  
Ռոտամը դայ փահրալան:

«Նորա ոյժով այս հակայ,  
Բաշ ու մարմնով կորովի,  
Անշուշա Ռոտամն աննաման  
Նորա ձեռքով կըսպանի:

«Ըմբիշներից ոչ մի մարդ  
Զի յանդգնի գալ հանդէս,  
Եւ հակային այս անյաղթ  
Կանգնել երես առ երես:

«Ոչ մի մարտիկ չի լինի  
Որ կարենայ վրէժ լուծել,  
Ու Քովուսի սա գահին  
Կը տիրանայ անարդել:

«Մոպկտան այսպէս պատւիրեց,  
Մեռնել անւամբ պատուար,  
Լաւ է քան այն որ տեսնես  
Քո թշնամուն բախտաւոր:

«Եթէ նա ինձ ըսպանէ  
Զի խաւարի օրը մեր,  
Ոչ էլ մեզնից կը հասն  
Աստա արեան առւակներ:

«Քանի որ կայ քաջ Քուզարդ  
Եւ կան որդիքն իր ութսուն,  
Բոլորն արի ու վսեմ  
Եւ բոլորն էլ միծանուն,

«Քանի որ կայ Գիվի պէս  
Ոստիատական, երկրաւեր,  
Որ է ամէն ահուճրում  
Վերին բարձի բարձատէք,

«Ինչպէս Բահրամ ու Ռոհնամ,  
Երկուան էլ գոռ ու հրդարտ,  
Ինչպէս Շիրուշ, Շիրուժան,  
Կուլի գաշտում քաջամարտ,

«Ամենն էլ յետ իմ մահից  
Ինձ կը յիշեն սիրալիր,  
Եւ կը լինեն թշնամուց  
Մահւանս համար վրէժխնդիր»

«Թէ չեմ լինի Իրանում,  
Թող չը լինիմ յաւիտեան,  
Յիշում եմ ես խըրտան այս  
Մեր մողպետից սրբազան.

«Երբ որ նոճին արմատից  
Գլուխ է քաշում նազենի,  
Փասխանն արժէ որ չառնէ  
Բոյրը խոտից վայրենի»:

Ապա դարձաւ Սոհրաբին,  
«Ի՞նչ է քո այս դայրացում,  
Ամբողջն ահա Ռոստամի  
Շուրջն ես ինձ հետ խօսակցում:

«Ի՞նչ է պատճառն այդ սխի,  
Որ դու ունիս նորա դէմ,  
Եւ քո ստիպման, որ ես էլ  
Ասեմ ինչ որ չը դիտեմ:

«Նորա մասին, ասացի,  
Ես չը գիտեմ ոչ մի բան,  
Գուցէ պատճառ ես փնտռում  
Իմ, անմեղիս, զլխատման:

«Պէտք չէ արիւն թափելիս  
Փնտռել պատուակ անտեղի,  
Ինչ՞ո՞ւ գոյներ խառնակել,  
Ընտրել ճամբայ զարտուղի:

«Ոյժը կտարել Ռոստամի  
Չէ գա բընաւ հընարին,  
Ասացի քեզ և կասեմ,  
Որ չէ մի գործ գա դիւրին»:

«Պէտք չէ որ դու մտածես  
Կուի կոչել այդ մարդուն,  
Թէ չէ երբ որ տեսնէ քեզ  
Փռչիլդ կը տայ նա քամուն»:



ՍՈՂՐԱԲ ԱՐՇԱԻՈՒՄ Է ԻՐԱՆԻ  
ԲԱՆԱԿԻ ՄԷՋՏԵՂ ԵՒ ՔԱՆԴՈՒՄ  
Է ՔԱՎՈՒՍԻ ՎՐԱՆԻ ՄԵՒԵՐԸ



Երբ Հաջիրից աչապիսի  
Սուքեր լսեց համարձակ,  
Անվախների իշխանն այդ  
Գարձրեց նորան իր քամակ:

Նա շուս տեղ երեսն իր,  
Չարտատանեց ոչ մի բան,  
Սարհրդաւոր խօսքերից  
Ազլամ մընաց նա խաղաւ:

Չարկեց ձեռքի յետևով  
Իր խօսակցին մի հարւամ,  
Ու տեղն հկաւ ու նստեց.  
Վերից Հաջիրն ընկաւ ցամ:

Մտքերի մէջ խորացաւ  
—Մտքեր երկար ու բարակ—  
Պատերազմի ծրրազիր  
Բաշեց ամէն մի տեսակ:

Ապա կապեց անյտալող  
Վրիժառութեան իր դօտին,  
Իշխանական, ոսկեղէն  
Թագն իր վերջրեց թանկագին:

Հագաւ իր զրահն ու գլխին  
Դըրեց ումի սաղաւարտ,  
Արագ ինչպէս մի քամի  
Առաւ փայլուն մի գեղարդ:

Առաւ նոյնպէս աղեղներ  
Եւ ամբահիւս իր խեղդան,  
Բր ունն առաւ ծանրակուս  
Դիւանուած այն հսկան:

Բարկութիւնից նորա մէջ  
Եռաց արիւն և կրակ,  
Ելաւ նստաւ անհամբեր  
Երիվարին սանարագ:

Ինչպէս մի վիղ կատաղած  
Դիմեց դէպի ասպարէզ,  
Ցաակեց տեղից նորա ձին  
Մի շարժական լեռան պէս:

Կուի համար ուղմատենչ  
Նա դուրս եկաւ բանակից,  
Փռչին նորա նժոյղի  
Դարձաւ լուսնին մերձակից:

Քշեց ուղիղ նա մինչև  
Սիրաբ զօրքի Իրանեան,  
Կատաղութեամբ անարգել  
Հասաւ վրանին շահական:

Փախաւ նորա առաջից  
Ամէն ուղմիկ առնացի,  
Ինչպէս փախչէր վայրի էշ  
Յարձակումից սոխածի:

Փոթորկաշունչ այդ թափից  
Այդ խոյանքից հեծեալի,  
Բաղուկներիցն ու զէնքից,  
Երևոյթիցն անոխի:

Իրանական քաջերից  
Մէկն էլ չը կար այնպիսին,  
Որ կարենար համարձակ  
Նայել նորա երեսին:

Ապա բոլոր սաղմիկներն  
 եկան 'ի մի խմբուցան,  
 «Ա՛յս է, ուրեմն», ասացին,  
 «Փղամարմին այն հսկան:

«Նայել անգամ չէ կարող  
 նորա գէմքին ոչ մի մարդ,  
 էլ ուր մընաց որ ընդգէմ  
 նորա մղէ մենամուրտ:»

Սոհբարն, այն ինչ, մանչոց  
 Ուժգնօրէն սհարկու,  
 եւ Քալուսին շահնշահ  
 Ուղղեց խօսքերն այս կծու:

Այսպէս ասաց արքային,  
 «Ո՛վ այրազատ թագաւոր,  
 Ի՞նչ է արդեօք քո վիճակն  
 Ազատ դաշտում արնաթոր:

«Ինչո՞ւ համար ես ընտրել  
 Քալուս-է-Քէյ քեզ անուն,  
 Գու որ կուում վագրերի  
 Ծնկներ չունիս հաստատուն:

«Եթէ շուս տամ նիզակն այս  
 ես իմ ձեռքում մի վայրկեան,  
 Ամբողջ զօրքերդ այս անթիւ  
 ես կը փռեմ անկենդան:

«Իմ խնջոյքի ժամանակ  
 կերայ դաժան մի երգում,  
 Ուր ժանդէսազմն ըստանուեց  
 նորա մահուան իսկ վայրում,

«Որ կենդանի չը թողնեմ  
 Ձեզնից մէկ մարդ սաղմական,  
 Որ կենդանի քաշել տամ  
 Քալուս-Քէյին կախադան:

«Գու ո՞ւմ ունիս, ասն ինձ,  
 Պարսիկներից այնքան քաջ,  
 Որ յանդգնի այս դաշտում  
 Գալ ու կանգնել իմ առաջ:

«Ո՞րտեղ եմ Գիվ ու Գուլարդ,  
 Ո՞ւր է սլահել արին թուս,  
 Ո՞ւր է առիւժ Գոսթահամ  
 եւ մարկոսրդ ու Քալուս:

Ո՞ւր է Ռոստամ, աշխարհի  
Համբաւաւոր հեծեալն այդ,  
Ո՞ւր է Զանդէն փահլավան,  
Իբրև ըմբիշ քաջայայտ:

«Ո՞րն է արդեօք տղամարդ,  
Կոչ եմ անում, դուրս գայ թող,  
Եւ թող դաշտում այս արեան  
Գայ վրէժ առնէ, լուծէ ոխ»:

Այսպէս ասաց ու լսեց,  
Ապա սպասեց բաւական,  
Զեկաւ զօրքից Իրանի  
Նորան ոչ մի պատասխան:

Երբ նըկատեց որ չեկաւ  
Իր դէմ ոչ մի մարտնչող,  
Շարժւեց տեղիցն ու դիմեց  
Դէպի շահի վրանասքող:

Մէջքը թեքեց ձիու վրայ,  
Լարեց նիզակն և արագ  
Քանդեց մեխերը վրանի  
«Եօթնապատիկ մի տասնեակ:

Վրանն ամբակապ, անյապապ  
Գետին փուեց շահական,  
Փողի ձայներ բարձրահինչ  
Ամէն կողմից լսեցան:

Տխրեց արքան Գէյ-Քավուս,  
Ու ձայն տւեց անհամբեր,  
«Ո՞վ քաջագուն, քաջազգի  
Դուք իմ բոլոր ռազմիկներ:

«Մէկը լուր տայ Ռոստամին,  
Ահից թուրքի այս հսկայ  
Իմ քաջերից ոչ մէկի  
Գլխում այլ ևս խելք չը կայ»:

«Զունիմ ոչ մի ձիաւոր  
Որ նորա դէմ մրցակցի,  
Զի յանդգնում անել այդ  
Եւ ոչ մի հատ իրանցի»:

Թուան առնելով պատգամն այդ  
Վրանը դիմեց Ռոստամի,  
Եւ ինչ խօսքեր որ լսեց,  
Պատմեց նորան մի առ մի:

Ռոստամ աւեց պատասխան,  
 «Երանական ինչ արքայ  
 Կոչել է ինձ որ լինիմ  
 Արքունիքումն իր ներկայ»

«Մերթ հաճոյքի, մերթ կուրի  
 Արել են ինձ մասնակից,  
 Թէ ոչ կուրի չարչարանք՝  
 Ես չեմ տեսիլ Քալուսից»:

Եւ հրամայեց որ խսկոյն  
 Ռախշի վերայ գնեն թամբ,  
 Եւ այրուծին կնճռոտեն  
 Ճակատն իրենց բարկութեամբ:

Նայեց Ռոստամ դէպի դուրս  
 Եւ նըկատեց զարմացած,  
 Որ գաշտերից դէպ իրանց  
 Գալիս է Գիվ սրընթաց:

Եկաւ խսկոյն ոսկեհուն  
 Թամբը դրեց Ռախշի վրայ,  
 Այն ինչ ասում էր Գորդին  
 «Արազ շարժւիր, շուտ արան»:

Քաշում էր, ուն իր ուսին,  
 Ռոհնամ ձիւս փորակապ,  
 Զրանն էր սարքում նժոյզի  
 Թուս ձեռքերով իր ըշտապ:

Մէկը միւսին, «Շտապիր»,  
 Ասում էին անհամբեր,  
 Վրանի միջից երբ Ռոստամ  
 Լսեց նրանց այս խօսքեր,

«Անրիմանի կուր է սա»,  
 Եւ լռեկայն մըտածեց,  
 «Մարդու համար չի լինի  
 Իրաբանցում այսքան մեծ»:

Զարկեց իր ձեռքն ու շտապով  
 Հագաւ վազրի իր մորթին,  
 Մէջքին, կտակեց, անանկազմ  
 Քիանական իր գօտին:

Ռախշի վերայ բարձրացաւ,  
 Շարժեց դէպի իր ճամբան,  
 Գան ու գօրքի, Զաւարին  
 Թողեց իրրի պահապան:

«Զը հեռանաս աշտեղից»,  
Զաւարէին նա սասց,  
«Եւ դու քան ալլը աւելի  
Ականջդ առ ինձ պահիր բաց»:

Տանում էին նորա հետ  
Նորա դրօշակն անտուիկ,  
Գընում էր նա ուղղմտանէ,  
Գէմքն էլ մոռլլ էր ստատիկ:

Երբ որ տեսաւ Սոհրարին,  
Բաշն ու թիկունքն հիասքանչ,  
Եւ լանջը լախն՝ որ կարծես  
Անյաղթ Սամի լինէր լանջ,

«Ե՛կ աշտեղից միասին  
Մի կողմ քաշենք մենք յատուկ,  
**Մի ուղղմտաշա սրմենք**  
Ուր չը լինի մեծ աղժուկ»:

Շարժեց Սոհրարն անյաղաղ,  
Մարտի համար ակնշալից,  
Երբ որ լսեց խօսքերն այս  
Աշխարհուշակ Ռոստամից:

Քսեց Սոհրար ալի ափի,  
Բորբոքաւիւն մարդու պէս,  
Շարժեց զօրքի առջով  
Գէպի մի նոր սուպրէզ:

«Գընո՛ւ, գընանք միասեղ»,  
Դարձաւ սոսց խօսակցին,  
«Ռազմիկներ ենք մենք երկու  
Մի տեղ կընտրենք առանձին»:

«Իբան, Թուրան աշխարհից  
Պէտք չէ ոչ մի սպամարար,  
Մենակ լինենք ես ու դու  
Բաւ է այդքան մեղ համար»:

«Դու հասակով բարձր ես շատ,  
Թե ու թիկունք ունիս լու,  
**Վնասեղ են քեզ և սակախ**  
Բո տարիներն անսակաւ»:

«Լսիր խորհուրդս և ընդմիշտ  
Դուշա ու կսխ դու բաց թող,  
Իմ մէկ հատիկ բուռնցքիս  
Դու գիմանալ չես կարող»:

Դիտեց Ռոստամ մի վայրկեան  
Տեսքն իր հզօր խօսակցի,  
Չափեց նորա ուսն ու թև,  
Նորա իրանն առնացի:

«Կամանց, արև պատանիս»,  
Ասաց Ռոստամ կամացուկ,  
Պաղ է գետինն ու կապիտ,  
Իսկ օղբ տաք ու վազուկ:

«Շատ եմ տեսել կուլի դաշտ  
Ծեր սարիքում իմ աշպէս,  
Զօրք ու բանակ բաղձամարդ  
Շատ եմ գետին վրել հա:

«Շատ են դեկր իմ ձեռքով  
Բանել ուղին կարստեան,  
Զօրքն իմ կողմի չի տեսել  
Յայտօր երես պարտութեան:

«Նայքիք ինձ լու, ապա տես  
Ինձ քեզ մարտում մրցակից,  
Թէ իմ ձեռքից ազատես,  
Մի վախենար նհանդից:

«Ռազմի դաշտում արնասեղ  
Տեսել են ինձ լեռ ու ծով,  
Թէ թուրանի զօրքերին  
Ինչ եմ արել իմ սրով:

«Վկայ լինել կարող են  
Խօսքիս աստղեր ու լուսնեակ,  
Աշխարհն ամբողջ քաջութեամբ  
Դըրած ունիմ սաքիս ասի:

«Ով որ տեսել է ինձ ցարդ  
Զօրքի սրտում կուլիս,  
Կարձես ներկայ է եղել  
Ու թիւն հաշուել խնջոյքիս:

«Իայց իմ սրտում գէտի քեզ  
Կայ մի զգացում սիրակից,  
Չեմ ցանկանում, որ զրկւիս  
Դու իմ ձեռքով այս կեանքից:

«Դու այս ուսով ու բաշով  
Չես թաքքերին նմանում,  
Նոյնպէս և ես չեմ տեսել  
Քո նմանին իրանում»:

Երբ որ լսեց Ռոստամից  
Սոհրաբ խօսքեր այս նըման,  
Կարծես թէ մէկ ակնթարթ  
Սիրտը շարժեց զէպ նորան:

«Մի հարց ունիմ քեզ տալու»,  
Դարձաւ, ասաց նա այսպէս,  
«Խնդրեմ որպէս պատասխան  
Ճշմարտութիւնն ինձ ասես:

«Ի՞նչ է, ասն, և ումից  
Ծագումդ, անունդ և արիւն,  
Եւ քո անտուտ խօսքերով  
Սրտիս բաշխի՛ր բերկրութիւն:

«Թւում է ինձ թէ իբօք  
Ինքդ Ռոստամն ես յայտնի,  
Եւ սերունդով շաղկապւած՝  
Դու նէյրամին անւանի»:

«Ռոստամը չեմ ես բընաւ»,  
Այսպէս տւեց պատասխան,  
«Չունիմ բընաւ իմ տոհմով  
Բաժին Սամից նէյրամիան:

«Նա փահլափան է աւագ,  
Աշխարհոջակ և հզօր,  
Ուն նա գահ և պըսակ,  
Իսկ ես՝ նորան փոքրաւոր»:  
Սոհրաբ յոյսից զրկւելով՝  
Յոյսից խաղառ ձեռք լաց,  
Դարձաւ ցերեկն ըսպիտակ,  
Նորա համար, մթամած:



ԴՈՍԱՄԻ ԵՒ ՍՈՂՐԱԲԻ  
ՄԵՆԱՄԱՐՏԸ



Մենամարտի դաշտ մտաւ,  
Նիզակ առաւ ի գուղար,  
Այն ինչ իր մօր տաածից  
Մընաց սաստիկ ապշահար:

Մտան, և կարճ տէրերի  
Մի նեղ կրկէս կազմեցին,  
Ու սկսեցին իրար գէժ  
Նիզակամարա մի ուժգին:

Գեղարդներից ծայր ու կապ  
Փշրեցան, թափեցան,  
Ապա թեքեց զէպի ձախ  
Իւրաքանչիւրն երասան:

Ու հնդկական սրերով  
Երկու անյաղթ մրցակից,  
Սոսկացուցին խոյանքով  
Բոց տեղացին երկաթից:

Կտորների փոխարկւած՝  
Թափեց ամէն մի սուսեր,  
Ձէր գա կռիւ այլ կարծես  
Դատաստանի օր լինէր:

Առաւ իր զուրդն անազին,  
Ապա ամէն ախոյեան,  
Եւ հարւածներ տեղացին,  
Նա՛ այս մէկին, սա՛ նորան:

Հարւածներից ուռերի  
Դարձան խոզառ յոգնարեկ,  
Դաժանադէժ, սիգածեմ  
Մարդ ու նժոյգ երկուստեք:

Ձրահը թափեց ձիերից  
Պատառ դարձած ու պառառ,  
Ձրահը նոյնպէս ջախջախեց  
Մարդկանց զերայ ուժասպառ:

Գործից ընկաւ ամէն ձի,  
Ամէն ուղմիկ անարկու,  
Ո՛չ մի բազուկ, ո՛չ մի ձեռք  
Էլ ոյժ չունէր շարժելու:

Ամէն բերան՝ լեցուն հող,  
Ամէն մարմին՝ ջրաթոր,  
Ամէն լեզու ծարաւի  
Ցամքածութեամբ ճեղքուոր:

Ապա մի վայր կանդ առան  
Մեկուսացած իրարից,  
Այնտեղ ցաւով լեցուն՝ հայր,  
Այստեղ որդին՝ վշտալից:

Ինչքան զարմանք, ո՞վ Աշխարհ  
Կայ քո բոլոր գործերում,  
Քոնդ է անբեկ ինչ որ կայ,  
Քոնդ է ինչ որ կայ բեկում:

Սիրոյ շարժման, դոցա մէջ  
Մի՞թէ նշոյլ էլ չը կայ,  
Սէրը մընաց քողարկած,  
Իմաստութիւնն՝ աններկայ:

Իւր զաւակին ճանաչել  
Գիտէ ամէն կենդանի,  
Լինի դաշտում վայրի էջ,  
Եւ կամ ծովում ձուկ լինի:

Մարդն է միայն դա, որին  
Թոյլ չեն տալիս կիրք ու սխ-  
Որ ճանաչէ թէ իր դէմ  
Զաւակն է իր, թէ ոտիս:

Ռոստամ խորհեց իր ներսում,  
«Ես չեմ բընաւ տեսիլ ցարդ,  
Որ մինչև իսկ մի վիշտով  
Այսպէս մղէ մենամարտ:

«Ճերմակ դեի կըսուին իմ  
Թուում է ինձ խողալիկ,  
Քաջութիւնից իմ ախօր  
Սիրտըս դարձաւ յուսալիք:

«Դիմացս, տհա, մի տղայ,  
Կեանք չը մտած պատանի,  
Որ չէ յայտնի մեծերից,  
Չէ փահրալան անւանի:

«Դորա ձեռքից աշխարհն իսկ  
Կորցրեց արժէքն ինձ համար,  
Երբ մանաւանդ երկուստեք  
Դիտում են մեզ ապշահար»:

Յողնութիւնից երբ նորա  
 Ձիանց հանդիսառ աւեցին,  
 Երբ տանջանքից եւ իրանք  
 Հանդստացան վերստին,

Կարն ամբացրին աղեղի  
 Երկու հերոս քաջամարտ,  
 Մէկը՝ արճաս պատանի,  
 Միւսը՝ հասուն ազամարդ:

Կար վերտահիւս ու զրահ կար,  
 Նաև վազրի կար մորթին,  
 Չեղաւ բընաւ ազգեցիկ  
 Նեան ու սըրաք երկաթին:

Ըսկսեցին նետերի  
 Տեղալ ուժգին մի տարափ,  
 Կարծես աշնան ծառերի  
 Տերև լինէր զիւրաթափ:

Մեծ տխրութիւն ըզգացին  
 Մէկը միւսից՝ երկոքեան,  
 Եւ գէպի մէջքն ու գօտին  
 Մէկը միւսի ձեռք տարան:

Հսկայ Ռոստամն եթէ ձեռք  
 Չարկէր քարին վեթխարի,  
 Սև քարն անգամ կը քանդէր  
 Գետնից դաշտում գուպարի:

Կը բարձրացնէր նոյն իսկ լեռ  
 Մըկանուքովն անաւոր,  
 Քարը ձեռքում կը սեղմէր  
 Իբրև մոմի մի կտոր:

Բռնեց գօտին Սոհրարի,  
 Թափեց ինչ որ ունէր ճիգ,  
 Որպէսզի գէթ իր թամբից  
 Շարժէ նորան մի վոքրիկ:

Իսկ նորա կազմն այդ ոյժից  
 Կարծես շառաւ ոչ մի լուր,  
 Ձեռքը մնաց Ռոստամի  
 Արժանիքիցն իր թափուր:





ՌՈՍՏԱՄԻ ԵՒ ԱԵՐԱԲՈՒՄԻ  
ՄԵՆԱՄԱՐՏԵ

ՌՈՍԱՄԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ ԱՇՔԱ-  
ԲՈՒՍԻ ՀԵՏ ԵՒ ԱՇՔԱԲՈՒՍԻ  
ՍՊԱՆԻԼԸ



Մի քաջ, անունն Աշքարուս,  
Թուրանական բանակից,  
Եկաւ ու ձայն արձակեց,  
Որպէս թմբուկ՝ թնդալից:

Յոխորաանքով պահանջեց  
Մի իրանցի մարտնչող,  
Որ սվ դուրս գայ նորա դէմ՝  
Գլուխը սեղմէ մինչև հող:

Ձի էր վարում աջ ու ձախ  
Եւ հրաւիրում ոսղմակից,  
Փռչին աշխարհ էր բռնել  
Նորա ձիու սմբակից:

Ռոհնամն եկաւ, զլլսին խոյր,  
Ու զրահն երկաթ՝ իր հագին,  
Դաշար նետուեց և կռի  
Փռչին հասու երկնքին:

Աշքարուսին դէմ առ դէմ  
Գրո՛հ էր տալիս կատաղի.  
Երկու կողմից բարձրացաւ  
Չափն թմբուկի ու փողի:

Նեաեը սեղալ ըսկսեց  
Այնպէս արագ, որ թւաց  
Մէկ աղեղով վաշտի դէմ  
Դարան լինի նա մտած:

Ծածկւած էր ողջ պողպատով  
Մենամարտիկն անվեհեր,  
Ինչպէս քամին կը սողար,  
Անցան վրայիցն այդ նեաեը:

Ուռը նորա ծանրաշարժ  
Արդ բարձրացաւ դէպ վերև,  
Սակայն կռից անզաղբում  
Յոզնեկ էր խիստ նորա թև:

Ոչ մի վնաս չը բերեց  
Աշքարուսին այդ մահակը,  
Հարւածողի մահատինչ  
Բոլոր ջանքին հակառակ:

Չեոքը տարաւ իր գուռզին  
Թուրանացին այն հերոս,  
Դարձաւ երկիրն՝ երկաթեայ,  
Դարձաւ երկիրքն՝ երենոս:

Սաղաւարտին Ռոհնամի  
Իջաւ ուժգին մի հարւած,  
Սոյրը գլխից թափւեցաւ  
Փշրանքների փոխարկւած:

Չգաց որ էլ կարող չէ  
Լինել գաշտում գիմադբաւ,  
Ռոհնամ դէպի լեռնակողմն  
Երես թեքեց ու փախաւ:

Տեսնելով այդ՝ բանակից  
Խիստ զայրացաւ արէն Թուս,  
Չին խթանեց որ խկոյն  
Դիմէ դէպի Աշքարուս:

Ռոստամ, թէև բարկացած՝  
Բայց արդիւնց այդ շարժում,  
Ասաց, «Հերոս է Ռոհնամ  
Բաժակների հանդիսում. —

«Գիտէ սուսեր պարացնել  
Գինարբութեան ժամանակ,  
Ու քաջերի շրջանում  
Գլուխը բռնել համարձակ:

«Ո՞րտեղ է նա թագնուել  
Գոյնը թռած, գլխիկոր,  
Աշքարուսի նմանից  
Ձէր նա պակաս ձիաւոր:

«Բանակը դու պահպանիր,  
Իսկ ես հէնց այժմ նորա դէմ,  
Թէեւ զրկած իմ ձիուց,  
Մենամարտի կը դիմեմ»:

Հարն աղեղի ամբացրեց,  
Թեին ձղեց աղեղն իր,  
Գօտուն զարկեց կապարձից  
Մի քանի նետ հատընտիր:

Եւ սե՛ ինչպէս երկնոս,  
Ձեռքին՝ մի նետ անըման,  
Եկաւ, կանգնեց, սիլզածեմ  
Աշքարուսի յանդիման:

Գոչեց Ռուսամ բարձրաձայն,  
«Ո՞վ բազմախորձ ռազմարար,  
Քեզ նոր եկաւ ախոյեան,  
Տեղըդ նորից մի՞ դառնար»:

Բարձր ծիծաղ արձակեց,  
Ու զարմացաւ Քէշանին.  
Սանձը քաշեց նժույզի,  
Ու մօտ կանչեց նարեկին:

Հարցրեց նորան ծաղրանքով,  
«Ի՞նչ է անուեդ, ո՞վ ես դու,  
Մարմինդ, ասն, գլխազրու.  
Ո՞վ է արդեօք սղբալու»:

Ռուստամն ասաց յաղթանգամ,  
«Ձարբաստի՛կ դու այրաս,  
Ի՞նչ ես հարցնում իմ անունս  
Այս կրկէսում մարդաշատ:

«Մայրըս, կասեմ, անունն իմ  
,Մահ՝ է կնքել քեզ համար,  
Կափ է շինել վիճակն ինձ  
Գանդիլ վերայ գլխազար»:

Ասաց նորան Քէշանին,  
«Տակիդ էլ ձի շունիս դու,  
Մահեան, ապա, մի գիրքին  
Ձոճ ես եկել դառնալու»:

Նորան Ռոստամն յաղթակազմ  
Այսպէս տւեց պատասխան,  
«Ո՛վ կուտաննչ կեղծհերոս,  
Բայց կուելիս՝ անպիտան,

«Իու չես տեսել դեռ ռազմիկ,  
Որ դաշտ մանէ հետիտտ,  
Եւ փշրէ գանգը քարով  
Վզանների յաւակնոտ»:

«Ինձն ու առիւծն ու վիշապ  
Ձեր աշխարհում հեռաւոր,  
Միթէ կուի ժամանակ  
Դաշտ են մտնում ձիաւոր»:

«Դու կը տեսնես, որ հիմա  
Քեզ, ո՛վ ասպետ մակաձի,  
Կասուցանեմ օտապնաց  
Մարդու կըսիւն առնացի»:

«Շուտով պիտի դարձընեմ  
Քեզ էլ ինձ պէս հետևակ,  
Որ երկուտեք զօրքերի  
Ծաղրը դառնաս խայտառակ»:

«Մէկ օտաւորն այս կուում,  
Այս դաշտի մէջ և այսօր,  
Լաւ է քան թէ քեզ նման  
Երեք հարիւր ձիաւոր»:

«Ո՛ւր է», ասաց Քէշանին,  
«Քո դէնք, քո սուրն ու նիզակ,  
Ես չեմ տեսնում, եթէ ոչ,  
Սարէութիւն ու ծանակ»:

«Նեա ու ազկ կը տեսնես»,  
Տւեց Ռոստամ պատասխան,  
«Որոնք շուտով աշխարհից  
Քեզ կարտաքսեն յախտեան»:

Երբ նկատեց որ ձիով  
Պարձանք է զգում նա շատ մեծ,  
Ծոնց լարով աղեղն իր,  
Լարն ուժղնապէս նա քաշեց,

Եւ ուղարկեց մի հատ նետ  
Նորա ձիուն թանկագին,  
Իր սոնկայս բարձունքից  
Երեսն իվայր ընկաւ ձին:

Ռոստամ ասաց ծիծաղով  
Եւ մի շեշտով ծաղրական,  
«Լաւ է զքնաս ու նստես  
Կողակցիդ մօտ պատուական».

«Գլուխն, արժէ, ծնկիդ վրայ  
Առնես, շոյես զգլուխից,  
Եւ մի սրոշ ժամանակ  
Հանդստանաս դու կուռից:

«Ի՞նչ շատ էիր պարծենում  
Քո խեշակով մեծարգի.  
Ինչպէս դու ես այժմ անոք  
Նա էլ չունի ոչ սքի»:

Ուղղեց աղեղն Աշքարուս  
Դէպի Ռոստամն անւանի,  
Մարմնով սակայն, գոգթոջուն,  
Դէմքով ինչպէս ջրդենի:

Եւ նետերի մի տարաւի  
Տեղաց ուժգին և արագ:  
Ռոստամ ասաց անտարբեր,  
«Նոստրնակին՝ խոտընակ:

«Զուր նեղութիւն ես տալիս  
Փախուկ ապրած քո մարմնիդ,  
Զուր ես տանջում բազուկներդ  
Ու չարանենդ քո հօգիդ:

«Քո պէսի նետն իմ վերայ  
Իքնաւ ազդու չի լինի,  
Հսկաներին տաղալոզ  
Դու չես արին անւանի:

«Քո մէջ չըկայ ոչ մի բան  
Տըզամարդու ոսկմասէր,  
Նըպատակին չեն հասիլ  
Քո ազեղից քո նետեր:

«Տեսնում եմ ես բախտը քո  
Դարձած քո դէմ չարաբաստ,  
Եւ քո մարմինդ այս գաշտում  
Տեսնում եմ ես դի տապաստ:

«Մարդը դաշտի և արեան  
Դու չես եղել և դու չես,  
Ճակատագիրդ հէնց հիմա  
Դառնայ պիտի գեղներես»:

Հսկան արդէն դայրացած՝  
Շփեց ձեռքովն իւր ազեղ.  
Վազրի նըման մենչաց  
Որտապին և ահեղ:

Անմիջապէս անհամբեր  
Ձեռքը տարաւ իր դօտուն,  
Ընարեց բոլոր նետերից  
Մէկը շխտակ ու ճկուն,

Նեաը քաշեց նա դօտուց,  
Ապա մի շխտէ իբրև ջուր,  
Վերան արծւի սրաթև  
Ամուր խրեած չորս փետուր.

Նորից դաստակը շփեց  
Իւր ազեղի միջակոր,  
Բռնեց կաշին եղջերուի  
Բթամատովն իր հզօր:

Աջինը նա ծնրագրեց,  
Չախինը նա շինեց սիւն,  
Կամարածև աղիղից  
Լսեց մի խուլ ճոնջիւն:

Երբոր նորա ականջին  
Հասաւ նետի լարաբուն,  
Հնչեց կաշին եղջերուի  
Մի ճաթիւնով թրթաուն:

Նորա մատին երբ համբոյր  
Սլաքը դբօշմեց ծայրատուր,  
Մէջքիցն անցաւ Գէշանու  
Նետի գաստակն ու փետուր:

Աշքարուսի կուրծքի մէջ  
Նեաը գամեց նա երբոր,  
Վերին երկինքն հիացած՝  
Ձեռքն համբուրեց մեծագօր:

Ճակատագիրն ասաց «Տնւր»,  
Օրհասագիրն «Ա՛ռ» ասաց,  
Երկինքն ասաց. «Շատ ապրես»,  
Ասաց Հրեշտակն. «Արի՛ կաց»:

Իսկ Քէշանին շանթահար՝  
Փռւեց գետին ու մեռաւ,  
Կարծեա թէ չէր իւր մօբից  
Ծընուենդ առել նա բընաւ:

Երկու կողմից բանակներն  
Էին վկան ակնապիշ,  
Կուռում էին այնինչ զոռ  
Երկու հսկան այդ ըմբիշ:

Նայեց Քամուս ու նայեց  
Զինաստանի եւ Խաքան  
Այդ հասակին, կեցւածքին,  
Կազմ և սթիփն առնակուն:

Եւ երբ դէպի բանակն իւր  
Ռոստամ դաշտից յիտ դարձաւ,  
Խաքանն իսկոյն ուզարկից  
Մի ձիուսար սրարշաւ,

Որ նեան եկաւ դուրս քաշեց  
Այն մարտիկից անւանի,  
Նեան իր սլաքով, փետուրով  
Քաշեց միջիցն արիւնի:

Մէջտեղ զըրին ու չորս կողմն  
Ամբողջ խմբուց մի բանակ,  
Եւ բոլորն էլ կարծեցին  
Թէ չէ դա նեա՝ այլ նիզակ:

Փետուրն ու շկահն այդ նետի  
Խազանն երբոր քննեց բաւ,  
Երիտասարդ նորա սիրան  
Իսկոյն հոգսից ձերացաւ:

Այսպէս ասաց փրանին,  
«Ո՞վ է ծանօթ այս մարդուն,  
Քաշերի մէջ Իբանեան  
Ո՞վ է և ի՞նչ իր անուն:

«Դու ասացիր, որ սոքա  
Խուժան են ցած և անարգ,  
Եւ չեն սեղւում քաջութեամբ  
Թէ ոչ մի սասր դասակարգ:

«Տեսնում ենք այժմ որ նոցա  
Նեան ու նիզակ չեն տարբեր,  
Եւ առիւծն իսկ չի լինի  
Նոցա կուռում անվիհեր:

«Քո խօսքերով ցոյց աւիր  
Սորանց ամբոխ անճարակ,  
Եւ այժմ ինչ որ սասցիր  
Այն չէ գլխից մինչև տակ»:

Փիւրանն ասաց Քաղանին.  
«Ամբողջ զօրքից Իրանի  
Չեմ ճանաչում ոչ մի մարդ  
Այս մեծութեանն արժանի»:

«Ո՞վ է մարդն այն, որ նետով  
Մի ծառ ճեղքել կարենար,  
Ես չըզխեմ ինչ ունի  
Սրտում այս մարդն ապիզար»:

«Չրկան քաջեր Իրանում  
Թէ ոչ միայն Գիւլ ու Թուս,  
Որոնք ունին շքեղ տեսք,  
Հզօր թիկունք ու լայն ուս»:

«Հումանի դէմ շատ անգամ  
Երբ որ ունէր նա պայքար,  
Իբր երկնոս սևացաւ  
Թուսի գլխին այս աշխարհ»:

«Եւ այժմ, ո՞վ է, չըխտեմ,  
Այս մարդն եկած Իրանից,  
Եւ չըզխեմ թէ ո՞վ կայ  
Մեր մէջ նորան մրցակից»:

«Կերթամ հիմա ես մինչև  
Բոլոր դրսի վերաններ  
Որ իմանամ թէ ո՞վ է  
Նորեկ մարդն այս անաւեր»:

Եկաւ դէմքով՝ նա դեղին,  
Եկաւ հոգով՝ մաատանջ,  
«Ո՞վ էր», հարցրեց, ամենից  
«Մարտնչօղն այդ քաջալանջ»:

«Ո՞վ էր արդեօք, որ վերջում  
Դաշտը մտաւ հետիտտ,  
Այդքանն վարպետ և ուժեղ,  
Եւ մեղ համար անճանօթ»:

«Պէտք է Ռոստամ լինի դա  
Եկած բանակն հակառակ,  
Թաղաւորի հրամանով՝  
Պարսիկներին օժանդակ»:

«Մեծ սիրտ ու լայն լանջ ունին  
Աւագանիքն Իրանեան,  
Երկաթն անգամ փշրել չէ,  
Նոցա համար դժւար բան»:

Այսպէս ասաց փիլիսոսին,  
Հումանն արիւ առդմատուն,  
Որ «Նեկացի թշնամին  
Ձի քամահրի թշնամուն»:

«Երբոր հասան Իրանից  
Նորանց խմբեր օգնական,  
Մեր թշնամի բանակից  
Չայն բարձրացաւ ցնծութեան»:

Փիրան տւեց պատասխան,  
«Ինչքան անգամ նորանոր  
Թուսի համար իր երկրից  
Եկած լինի ձիաւոր»:

«Թէ չէ Ռոստամ նոցա մէջ  
Երկիւզ չունիմ ես երբեք.  
Բընաւ Ռոհհամ ու Գորդին  
Չեն ինձ անուամ սրտարեկ»:

«Պատերազմող նոցա մէջ  
Չըկայ բացի գոռ Թուսից,  
Թէ Թէրթորդ, թէ Գորդին,  
Շատ են ըստոր Քամուսից»:

«Բանակն այնինչ իր ատաջ  
Նիստ ծանր ունի մի պայքար,  
Պիտի փնտռէ ամէն քաջ  
Մի մեծ անուն իր համար»:

Եւ այնակից սանարազ  
Քամուսի մօտ նա զնայց,  
Ու Մանշուբին, Քարթուսին  
Նայնպէս տեսաւ ըշտապած:

Ասաց. «Այսօր ունեցանք  
Նշանաւօր մի գուզար,  
Եւ երեաց որ գարձաւ  
Գառնուկը գայլ մեզ համար»:

«Հիմա խորճենք միասին  
Ինչ ճար ունինք մենք այսօր,  
Ո՞վ է ըրտում մեր գլխին  
Դժբախտութիւնն այս բոլոր»:

Քամուս տւեց պատասխան,  
«Մենք ունեցանք մի կռիւ,  
Որ մեզ բարի անւան տեղ  
Բերեց անուն անպատիւ:

«Մենամարտում այսօրւայ  
Կեանքից զրկեց Աշքարուս,  
Եւ այդ առթիւ սրտուրախ  
Շատ են խնդում Գիւլ ու Թուս:

«Սիրաւս դարձաւ երկու կէս  
Այդ ռազմիկից ահարկու,  
Սարսափ տիրեց բանակին  
Ահից նորեկ այդ մարդու:

«Ոչ ոք չկայ աշխարհում  
Նորա կազմով աննական,  
Մեր մէջ կանգնող նորա դէմ  
Չըկայ մէկ հատ ախոյեան:

«Նեաւը՝ մեղ մօտ է արդէն  
Թափն էլ տեսար աղեղի,  
Այն ինչ ոյժով չի հասնի  
Նորան առիւծ կատաղի:


«Պէտք է ուրեմն ենթադրել  
Չէնց այն Սաղղին ռազմասէր,  
Որի մասին տւիր մեզ  
Ապշեցուցիչ նշաններ,

«Մտել է այս կուռի մէջ  
Որպէս համեստ հետեակ,  
Այստեղ եկել պարսկական  
Զօրքին իրբւ օժանդակ»:

Փիրանն ասաց, «Սորանից  
Տարբեր է նա ձիաւոր,  
Ճակատամբարձ ու վսեմ  
Ըմբիշ է նա յաղթաղօր»:



ՔԱՄՈՒՍ ՇԱՐՑՆՈՒՄ Է ՓԻՐԱՆԻՑ  
ՌՈՍՏԱՄԻ ՆՇԱՆՆԵՐԸ



Քամուս, սրտով ըզգայուն՝  
Հարցրից կրկին ու կրկին,  
Քանզի ուզում էր անշուշտ  
Վճուխ հարցն այդ դժւարին:

«Նկարագրիր ինձ տեսնեմ,  
Մարդասիրե՞ծին դու ու մէտ,  
Ի՞նչպէս է նա ձեռնում միշտ  
Գէտի մարտի ասպարէզ:

«Նորա սյժից, հասակից,  
Գծիր ինձ պարզ մի պատկեր.  
Ի՞նչ է ասում տեսնելիս  
Իր գէմ կուտղ մարտիկներ:

«Ի՞նչ քաջութիւն և ի՞նչ տեսք  
Ունի մարդն այդ սաղմախար,  
Եւ կուէշու նորա գէմ  
Ո՞րն է տեսակն ինձ յարմար:

«Եւ թէ իրօք նա լինի  
Նոր ժամանած իր երկրից,  
Պէտք է դուրս գամ ասպարէզ  
Որպէս նորան մրցակից»:

Փիլրանն ասաց Քամուսին,  
«Ատուած չանէ, նա լինի  
Այստեղ եկած՝ ու յիշած  
Իր կախեներն երբեմնի:

«Թէ ոչ պիտի տեսնէիր  
Նո՞ճի ատոյղ ու շքեղ,  
Իր կեցւածքով՝ փառապանծ,  
Եւ իր գէմքով՝ աննաղեղ:

«Ի՞նչ շատ դաշտեր, որոնց մէջ  
Նորա ձեռքից Աֆրասիար,  
Աչքը բռնեց լեցուն ջուր,  
Հողին բռնեց լի սաբսափ:

«Ռազմիկ է նա աներկեղ  
Արքայասէր այդ արին,  
Եւ միշտ տառջ ինքն է որ  
Չեռք է տանում իր սրին:

«Կուեի սիրում է որպէս  
Սիւսիւսի վրիժառուն,  
Քանզի էր այդ պատանին  
Սանը նորա ձեռնասուն:

«Զէնքը նորա գործ ամեի  
Ոչ ոք կարող չէ բընաւ,  
Շատ են փորձեի ու փորձում  
Փահլավաններ ինքնարու:

«Կուի համար երբ որ նա  
Մէջքն է պնդում առնացի,  
Ամուր է կազմն ու հզօր  
Ինչպէս ոսանող առիւծի:

«Եթէ յանկարծ կուեիս  
Գեաին ձգէ նա իր կափ,  
Ոյժը գետնից կարելու  
Զունի նոյնիսկ մի վիշապ:

«Շինւած կաշուց առիւծի  
Նորա աղեղն ունի լար.  
Կշռում է մէկ նեան ու շկահ  
Տասնհակ սիրի հաւասար:

«Թէ խարակի մի բեկոր  
Զեռքում փորձէ նա սեղմել,  
Մոմ կը դառնայ և մոմից  
Դեռ փափկութեամբ առաւել:

«Զրահ է զգենում վերտահիւս,  
Պատերազմի ժամանակ,  
Եւ լանջապան՝ սեղմելով  
Նորա ամէն մի կոճակ:

«Այդ բոլորի վերայից  
Մի զգեստ ունի նա վազբի,  
Որ նախ հագնում և ապա  
Դուրս է դալիս պայքարի:


«Ոչ կըրակով կայրւի դա,  
Ոչ կը լինի ջրբով թաց,  
Երբ որ հողնէ ծածկոցն այդ,  
Կարծես լինի թև առած:

«Մի Ռախշ ունի իր ներքև  
—Մի ձի հսկայ ու սիրուն—  
Որ երբ շարժուում է կարծես  
Լեռն է շարժուում բիսութուն:

«Լըռում չէ գտն ու թնդիւնն  
Ամբողջ կուր ընթացքում,  
Գաշտի հողից ու բարից  
Կարծես հրդեհ է ստեղծում:

«Արժէ, սակայն, որ բոլոր  
Հանգամանքովն իր անկո,  
Որ դու նրան չը դըննու  
Կուսում բընաւ մարդատեղ:

«Այս հասակով, որ ունիս,  
Թի ու թիկունք ու բաշով,  
Եթէ ցոյց տաս, զարմանք չէ  
Մեծ արժանիք ու կորով»:



**ՌՈՍԱՄ ԵՒ ԷՍՖԱՆԴԵԱՐԻ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ  
ՎԵՐՋԻՆ ՄԱՍԸ**

ՌՈՍՏԱՄ ՇԱՍՆՈՒՄ Է ԷՅՎԱՆ ԵՒ  
ՋԱԼ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՇԱՐՑՆՈՒՄ  
ՍԻՄՈՐԴԻՑ



Ռոստամն երբ որ տեղ հասաւ,  
Եւ երբ մտաւ նա Էյվան,  
Իսկոյն նորա բոլորաիք  
Լնձրեկց նորա գերդաստան:

Աչքից արցունք է հասում  
Յարամարզի, Ջաւարի,  
Որ այրեցին կարծես թէ  
Տեսքից նորա վէրքերի:

Մազն էր փետրում լիարուռ  
Մայր Ռուզարէն իր գլխից,  
Եզունգներով նորա սուր  
Դէմքը դարձաւ վիրալից:

Ապա եկաւ Ջաւարէն  
Բացած իր կուրծքն ու գօտին,  
Առաւ նորա լանջադանն,  
Առաւ վաղրի եւ մորթին:

Ով որ նորա երկրում կար  
Հնարագէտ, բանխմաց,  
Հաւաքւեցան, նստեցին  
Յմբով նորա տան դիմաց:

Նա հրամայեց որ իր Ռախշն  
— Անզուգական երիվար—  
Տարւի ում մօտ որ գիտէր  
Մի գեղ անել կամ մի ճար:

Մազն էր քանզում ու մօրուքն  
Աշխարհատես ծերունին,  
Եւ գգւանքով երեսն իւր  
Քսում նորա վերքերին,

Եւ աւագում, «Թէ լինիմ  
Այս ծեր գլխով կենդանի,  
Եւ այս ախար վիճակում  
Տեսնեմ որդուս անւանի»:

Ռոստամ ասաց, «Անունից  
Մեղ ինչ օգուտ կամ բարիք)  
Երբ որ վճռով երկնային  
Լինում է միշտ լինելիք:

«Կայ իմ տաջ մի կռիւ  
Անասելի դժւարին,  
Որից տանջոււմ է սասաիկ  
Անպարտելի իմ հոգին»:

«Պէտք է ասեմ որ որպէս  
Պողպատակազմն էսֆանդեար  
Ես չեմ տեսած դաշտի մէջ  
Ոչ մի հզօր ապմարար:

«Աշխարհի շուրջն ամէն տեղ  
Ման եմ եկել համարձակ,  
Յայս ու անյայս բաներից  
Չեմ փնայել անտեղեակ:

«Ճերմակ դեին երբ հասայ,  
Բռնած մէջտեղն իր գօտու,  
Այնպէս գետին դարկեցի,  
Ինչպէս սափն ուռնու:

«Նեարս, որ միշտ կարող էր  
Ճեղքել նոյն իսկ մի կուռ սար,  
Որի թափին չէր կարող  
Ոչ մի աստղար դիմանար,

«Փորձեցի ես նորա վրայ  
Ոյժն իմ հզօր նեւերի,  
Անզօր վշեք նեւեցի  
Կարծես ընդդէմ մի քարի:

«Հէնց այն սուսերն իմ հատու,  
Որ ինձն անգամ թէ տեսնէր  
Թագնէկու նորա տակ  
Մի ժայռ սլփաի որոնէր,

«Նորա: հագուստն երկաթեայ  
Կարողանում չէ քերթել,  
Ոչ իսկ կարել գլխի վրայ,  
Մետաքսեղէն մէկ հաս թել:

«Եւ սրքան էլ ուղեհամ  
Փափկացուցիչ վարմունքով  
Այս քար մարդուն ներշնչել  
Գոնէ չնչին մի գորով,

«Նա չէ վճռել ինձ համար  
Թէ ոչ չարիք ցանկանալ  
Թէ իր խօսքով, թէ գործով,  
Թէ իր սգով սխտկալ:

«Փանք Աստուծոյ որ շուտով  
Մութը պատեց գիշերի,  
Եւ այդ մութից՝ մթագնեց  
Լոյսը նորա աչքերի:

«Այդ վիշապի գուպարից  
Ես շունչ առայ մի վայրկեան,  
Սակայն ի՞նչպէս գտնեմ ես  
Վերջին մի ելք վրկութեան:

«Որքան որ շատ եմ խորհում՝  
Սա է ճամբաս եղակի,  
Որ վազն անյայտ մի կողմով  
Գլուխը թեքեմ նժոյգի,

«Զարուստան գընամ ես  
Ուրկից չտանէ ոչ մի լուր,  
Եւ թնդ սաղա ամէն տեղ  
Շատ որոնէ ինձ իղուր,

«Մինչև որ վերջն այս բանից,  
Ուղէ կամ ոչ, ձանձրանայ,  
Թէև վատից յսպնիւր  
Սովորութիւն չունի նա»:

Պատասխանեց Զալը ծեր,  
«Որդիս, մի վայր ականջ դիր,  
Քանի որ խօսք չունիս էլ  
Եղի՛ր խօսքիս ուշագիւր»:

«Ամէն մի գործ աշխարհում  
Մի ճար ունի իր համար,  
Բացի միայն մահւանից,  
Որին չը կայ ոչ մի ճար»:

«Մի ելք գիտեմ ես յաջող  
Մեր վիճակից այս դժխեմ,  
Որ Սիմոնի որդին օգնութեան  
Մեզ այս կուռւմ հրաւիրեմ»:

«Թէ ինչ է պէտք մեզ անել  
Նա կը լինի ղեկավար.  
Եւ մեզ ընդմիջա կը մնայ  
Այս պետութիւնն ու աշխարհ»:

«Թէ ոչ անշուշտ կը դառնանք  
Մենք ու մերոնք անաւեր  
Էսֆանդեարի հրամանով  
Այդ հսկայի չարասէր»:

Երբ այս մտքին համաձայն  
Դարձան թէ հայր թէ որդի,  
Դէպի մի լեռ մերձակից  
Զալը գիմեց բազմատի»:

Վերցրեց իր հնա երեք հաս  
Կրակով լեցուն խնկարան,  
Նսե աբի ու խելօք  
Երեք հոգի օգնական»:

Ծերուկ կախարդն երբ լերան  
Գազաթն հասաւ ծայրասուր,  
Մետաքսահիւս քրտակից  
Հանեց շուտով մի փետուր»:

Բուրվառներից մէկի մէջ  
Բոցն արծարծեց նա հուրի,  
Եւ բռնելով բոցի վրայ  
Մի մասն այրեց փետուրի»:

Եւ յեայնսու գիշերից  
Մէկ պահն արդէն լրացած  
Դարձաւ երեսն երկնքի  
Եւս առուել մթամած»:

Չալը նայեց դէպի վեր  
Իր կայանից լեռնային,  
Եւ Սիմորդից ծանրացած  
Տեսաւ բարձունքն երկնային:

Թռչունը նոյն ժամանակ  
Օդից նայեց ՚իստորեւ,  
Լեռան ծայրին, բացալառ  
Կրակ տեսաւ իր ներքեւ:

Չալին աւտաւ կրակի մօտ  
— Մրտում լի ցաւ ու կսկիծ,  
Եւ մի ճախրով վեհապանծ  
Իսկոյն իջաւ բարձունքից:

Չալն երբ տեսաւ Սիմորդին  
Սաւառնեկիս դէպի ցած,  
Փառք ու պատիւ և աղօթք  
Ծնրադրելով նա կարգաց:

Նորա առաջ բուրմունքով  
Լցրեց բուրվառն այն երբեակ,  
Դէմքին, սրտի արիւնից,  
Ցած էր հոտում մի վտակ:

Սիմորդն ասաց. «Ո՛վ արքայ,  
Ի՞նչ կայ, և ի՞նչ ունիս ցաւ,  
Որ աղերսանքդ իմ առաջ  
Այդպէս ծուխով բարձրացաւ»:

Ծերուկն ասաց, «Թ՛շնամուն  
Թոյ հարւածէ շնշտակի  
Վատութիւնն այն որ եկաւ  
Ինձ վատ մարդուց վատազգի»:

«Մարմինն առիւծ Ռոստամի  
Վէրքով ամբողջն է լեցուն,  
Եւ կաշկանդւած ուքը հօր՝  
Որ հոգ ասնէ իւր որդուն»:

«Նորա կեանքին վտանդ կայ,  
Այնպէս է նա վիրաւոր,  
Մէկն էլ այդքան ու այդպէս  
Վէրք չէ տեսել մինչ այսօր»:

«Հենց նոյն այն Ռախշն աննրման  
Կարծես լինի կենսապառ,  
Այնպէս է իր խոցերից  
Նա գարարուն ու թշառ»:

«Ելաւ, եկաւ Էսֆանդեար  
Ընդդէմ չքնազ այս երկրի,  
Եւ չէ բազխում եթէ ոչ  
Դուռը միայն պայքարի»:

«Նա չէ ուղում մեղանից  
Ո՛չ հող, ո՛չ դահ և ո՛չ թագ,  
Այլ թէ ծառից պահանջում  
Բերք ու արմատ բովանդակ»:

«Ո՛վ իմ արի փահլաւան»,  
Սիմորդն ասաց ձերուկին,  
«Թո՛ղ այս բանից ձախողակ  
Չբվըշտանայ քս հողին»:

«Պէտք է ինձ մօտ բերել տաս  
Ռախշին—ազնիւ այդ ձիուն,  
Որպէս նաև վեհամբարձ,  
Աշխարհածօն քո սրբուն»:

Մարդ ուզարկեց Ռոստամին,  
Չալը տարով այս պատգամ,  
«Յնցիր քո բաշն ու շատպիր,  
Մեկ օրն հասաւ բարեժամ»:

«Եւ հրամայիր որ նոյնպէս  
Քո մահամերձն երիվար  
Առաջնորդի անյապաղ  
Սիմորդի մօտ փրկարար»:

Երբ աղանջին Ռոստամի  
Հասաւ լուրն այս ցնծագին,  
Նա քարշ տւեց շուն իվեր  
Իրան և իր նժոյգին»:

Եւ երբ դագաթն այն լերան  
Ռոստամն հասաւ մեծանուն,  
Նա իր առջև, թռչունին,  
Տեսաւ, սրտով իմաստուն»:

Սիմորդն ասաց Ռոստամին,  
«Փի՛ղբդ հսկայ և հօրոյ,  
Այդ ո՛ւմ ձեռքով դարձար դու  
Այդպէս սաստիկ վիրաւոր»:

«Էսֆանդեարի դէմ անյազթ  
Ինչո՞ւ մտար կուլի մէջ.  
Եւ քո ծոցի մէջ ինչո՞ւ  
Կրակ ձգեցիր դու անշէջ»:

«Ո՛վ աէր գռւթի և սիրոյ»,  
Պատասխանեց նորան Չար,  
«Քանի որ արդ փայլուն դէմք  
Զիջանեցիր մեզ ցոյց տալ...»

«Եթէ Ռոստամն հէնց հիմա  
Չառողջանայ իր վէրքից,  
Ո՞ր անկիւնում աշխարհի  
Տեղ որոնեմ ես նորից:

«Սիտանն ամբողջ էսֆանդեար  
Կը փոխարկէ աւերի  
Եւ կը շինէ նորան որջ  
Առիւծների, ինձերի:

«Պիտի իւրի արմատից  
Նաղելի ծառն ամբարուն,  
Այժմ ի՞նչ կարիք խորհելու  
Թէ ինչ ասենք այդ մարդուն»:

Նայեց թռչունն ուշադիր  
Բոլոր նորա վէրքերին,  
Թէ կնյ միջոց ու կնյ յոյս  
Ապաքինման վերատին:

Իր կտուցով վէրքերից  
Արիւն հանեց մի քանակ  
Եւ ութը հաս, գուրս քաշեց,  
Ամեն խոցից մի սլաք:

Բոլոր վէրքերը նորա  
Շփեց նա իր փետուրով,  
Ռոստամն խկոյն ստացաւ  
Նորոգ մի կեանք ու կորով:

Ասաց, «Սոցերըդ բոլոր  
Կապւած պահիր անընդհատ,  
Եւ ամէն կերպ վըտանդից  
Հետու մընն մէկ շարաթ»:

«Վեր ան մէկն իմ փետուրից,  
Կաթով թրջիր դու զորան,  
Քսիբ բոլոր վէրքերիդ  
Որպէս բուժիչ բալասան»:

Սիմորղն ապա հրամայեց,  
Որ մօտ բերեն նժոյզին,  
Երբ մերձեցաւ՝ մօտեցրեց  
Կտուցն իւր նա դէպի ձին:

Եւ դուրս քաշեց վեց հատ նետ  
 Նորա վզում խորացած.  
 Այլևս նորա մարմնի մէջ  
 Ոչ մի սլաք չը մնաց:

Նժույզն խկոյն արձակեց  
 Հուժկու խըրիինջ ցնծալիւր,  
 Խնդաց, ուրախ այդ ձայնից,  
 Սիրտը քաջի թագածիր:

Սիմորզն ասաց Ռոստամին,  
 «Մ'վ փահլաւան փղաղօր,  
 Ունիս հոչակ թնդածայն  
 Ազգերի մէջ դու բարբ:

«Ինչո՞ւ կուէ ելար դու  
 Էսֆանդեարի հակառակ,  
 Պողպատեայ կազմ ունի նա  
 Եւ ուղմիկի՝ մեծ հոչակ:

«Նորա հագին քս տեսած  
 Նորա զրահն այն գեղամէ  
 Զբաղաշտից է հասել  
 Նորան որպէս մի սրարդև:

«Փոշտասերին նւիրեց  
 Այդ զրահն սուռջ մարգարէն,  
 Նետ ու նիզակ ու սուսեր  
 Դորան ազդել կարող չեն»:

Ռոստամ ասաց, «Եթէ նա  
 Բանա ու շղթայ չըյիշէր,  
 Սիրտըս բնաւ չէր գառնայ  
 Կատաղօրէն կուսէր:

«Աւօթանքից ինձ համար  
 Մահն է բարւոք առաւել,  
 Քան այն որ իմ ախոյեանս  
 Ինձ ըստիպէ խոնարհել»:

Սիմորզն ասաց, «Թէ քո դէմ  
 Կանդնած լինի Էսֆանդեար,  
 Եւ դու ճակատ իջեցնես,  
 Աւօթ չէ՛ դա քեզ համար.

«Քանզի չէ նա եթէ ոչ  
 Արքայածին ուղմազէտ,  
 Մաքուր է սիրան ու հոգին,  
 Կայ շնորհն Երկնի նորա հետ:

«Դարերի մէջ եկած չէ  
 Ոչ ոք նորա գեռ նըման,  
 Նորա շնորհիւ է շակել  
 Ողնաշարն իւր Պարսկաստան»:

«Եթէ ինձ հետ կը կապես  
 Պայման աղնիւ և անբեկ,  
 Որ նորա գէմ չըլինես  
 Նախախարձակ դու երբեք»:

«Որ երբ իրար գէմ կանգնած  
 Մենամարտէք՝ չուզենաս  
 Ոչ մի բանով դու լինել  
 Էնֆանդեարից գերագաս»:

«Որ երբ նորից հանդիպէք  
 Մատուցանես աղերսանք,  
 Պատրաստ՝ նորան նւիրել  
 Թէ քո հոգին, թէ քո կեանք»:

«Որ երբ բոսլէն պայմանեալ  
 Հնչէ վազւան առաւօտ,  
 Եւ չըլինի քո խնդրանքդ  
 Ընդունելի նորա մօտ»:

(«Իսկ թէ լինի նորա կեանքն  
 Այս աշխարհում վերջացած,  
 Ո՛չ հաշտութիւն, ոչ դադար  
 Քեզ չի շնորհի անկասկած»):

«Ապա ճարի ցոյց կը տամ  
 Քեզ ճանապարհ փառուհակ,  
 Որ բարձրացնեմ գլուխը քո  
 Մինչև վերին արեգակ»:

Այս խօսքերով Ռոստամի  
 Սիրաը բախեց բերկրալից,  
 Ազատեցաւ նա խալառ  
 Կուի բոլոր հոգսերից»:

«Քո հրամանից չեմ անցնի»,  
 Տւեց Ռոստամ պատասխան,  
 «Թէ երկնքից իմ գլխին  
 Սուր ու սուսեր իսկ տեղան»:

Սիմորզն ասաց, «Այն սիրով,  
 Որ ես ունիմ քեզ համար,  
 Գաղանիքն երկնի կասեմ քեզ,  
 Որ քեզ լինի զեկալար»:

«Գիտցիր, որ սլ սպանէ  
էսֆանդեարին քաջարի,  
Ճակատագիրը նորան  
Ի փոխարէն կը փշրի:

«Տառապանքից՝ քանի կայ  
Ձի ունենայ ազատում,  
Եւ չեն մնայ ոչ բարիք  
Եւ ոչ էլ գանձ իր ձեռքում:

«Դժբախտութեան դո՛ն է նա,  
Քանի որ է կենդանի,  
Եւ խիստ տանջանք կունենայ  
Այս աշխարհից երբ մեկնի:

«Եթէ լինիս իմ բոլոր  
Ասածներիս համամիտ,  
Վստահ եղիր, որ ընդմիշտ  
Պարտեց արդէն թշնամիդ:

«Հէնց այս գիշեր քեզ համար  
Մի հրաշք ՚ի յայտ կը բերեմ,  
Եւ կը գոցեմ վատարան  
Ամէն շրթունք քեզ ընդդէմ»:

«Համաձայն եմ», ասաց նա,  
«Ասածներիդ անխտիր.  
Ինչ որ ուզում ես ուրեմն  
Անվերապահ գործադրիր:

«Աշխարհն է սոսկ յիշատակ,  
Ու գնացական ենք մենք սին,  
Ձի մնայ մարդուց եթէ ոչ  
Ինչ որ ասեն իր մասին:

«Բարի անւամբ թէ մեռնեմ,  
Դա կը սեպեմ ինձ արժան,  
Անուն է պէտք ինձ համար,  
Մարմինն արօտ է մահւան»:

Սիմորդն ասաց, «Ուրեմն  
Գնա՛ ու շուտով ձիդ նստիր.  
Վեր առ նաև մի դաշոյն,  
Վստահելի և ընտիր:

«Յիշիր անունն Աստուծոյ,  
Եղիր նորան փառաբան,  
Եւ այս յոյսով դէպի ծովն  
Ուղևորվիր Ձինական:

«Պէտք չէ լինիս անհանգիստ  
Երկար ճամբի պատճառով,  
Հէնց այս գիշեր քեզ այնտեղ  
Կը հասցընեմ ապահով»:

«Այնտեղ կայ մի ծառաստան  
Ու մէջն էլ՝ մի մոշենի,  
Որթի ջրով է սնւած,  
Ու խիտ սողարթ նա ունի»:

«Ես ցոյց կը տամ քեզ մի փայտ,  
Խիստ հազւագիւտ և ընտիր.  
Կարիր, ու գլուխն, այդ փայտով  
Քո թշնամու, ջախջախիր»:



ՌՈՍԱՄՆ ԱՌՆՈՒՄ Է ՄՈՇԵՆՈՒ  
ՓԱՅՏԸ ԵՒ ՍԻՄՈՐԴԻ ՅՈՒՑՄՈՒՆ-  
ՔՈՎ ԴՐԱՆԻՑ ՄԻ ՆԵՏ Է ՇԻՆՈՒՄ



Երբ որ լսեց խօսքերն այս,  
Կապած ամուր իր գօտին,  
Իսկոյն նստաւ նոյն տեղում  
Ռոստամը քաջ իր Ռախշին»:

Նորան Սիմորդն հրամայեց  
Գնալ նորա առջևից.  
Քսեց նորա գազաթին  
Ապա թևն իւր դիւթալից»:

Թւաց ճամբան Ռոստամին  
Շատ հաճելի և շատ մօտ,  
Այն ինչ նա ինքն ու շուրջն իր  
Բուրում էին մշկահաս»:

Ձի էր վարում մինչև որ  
Մօտ էր հասնի ծովափին,  
Երբ նա տեսաւ Սիմորդից  
Երկինքն ամբողջ մթապին»:

Իսկ երբ կանգնեց նա խապառ,  
Ծովի ջրին մերձակից,  
Թռչունն իջաւ վեհափառ  
Իւր օդային բարձունքից:

Բուսած տեսաւ մի մոշի,  
Գլուխը բռնած դէպի վեր,  
Սիմորդն ապա մօտեցաւ,  
Նստաւ նորան առնթեր:

«Մի ճիւղ, որից», ստաց նա,  
«Շիտակ այլ ճիւղ չը կայ էլ,  
Ոչ էլ կայ բարձրն աւելին,  
Կամ դիմացկունն առաւել»:

«Հէնց այդ մոշուն է կապւած  
էսֆանդեարի մ'տաքն ու կեանք,  
Զիցէ թոյլ տաս քո մտքում  
Դէպի այդ փայտն անարգանք»:

«Կրակի վրայ դիր այդ փայտն,  
Ու նախ դսրան լաւ շտկիր,  
Յետոյ վեր առ երկու հաս  
Հին սլաքներ և ընտիր»:

«Փայտի վերայ ամրացրու  
Երեք փետուր, երկու սլաք,  
Սա է դէնքն այն եղակի,  
Որ քեզ կը ստայ յաղթանակ»:

«Այս մոշուց դատ՝ չէ կարող  
Խոցել նորան ոչ մի բան,  
Նոյն իսկ ամբողջ աշխարհի  
Զինւած քաջերն եթէ գան»:

«Քանզի դիւթանք է շնչել  
Նորան Զարդոշտ մարգարէն,  
Նորա մարմինն սուր ու նետ  
Ազդել բնաւ կարող չեն»:

Երբ որ Ռոստամը կտրեց  
Ծառից ճիւղն այն մոզական,  
Մեկնեց իսկոյն ծովափից  
Դէպի իւր բերդն ու էյվան»:

Նա թռչունի ցոյց տւած  
Բռնեց ճամբան տպահով,  
Սիմորդն այն ինչ թռչում էր  
Նորա գլխի վերայով»:

Նա Ռոստամին պատւիրեց,  
 «Հիմա հրբ որ էսֆանդեար  
 Քո դէմ դաշտում ուղենայ  
 Նորից մանեկ ՚ի գուպար,

«Առաջարկիր հաշտութիւն,  
 Եւ մի խնայիր աղերսանք,  
 Թող չը լսէ քեզանից  
 Ոչ մի տեսակ յսխորսանք:

«Քաղցր լեզուով գուցէ նա  
 Թողնէ էր վատ նպատակ,  
 Գուցէ նորից միտ բերէ  
 Հին օրերի յիշատակ,

«Թէ ինչպէս միշտ քո կեանքում  
 Եղել ես կազմ ու պատրաստ,  
 Վիշտ ու տանջանք կը բերու  
 Քո մեծերիդ ՚ի նպատատ:

«Երբ որ չեղաւ աղաչանքդ  
 Ընդունելի նորա մօտ,  
 Երբ նա քեզ այդ պատճառով  
 Սեպեց ստոր ու վախկոտ:

«Լարն ամրացրո՛ւ աղեղիդ  
 Եւ այս նետն էլ մոշենու  
 Մնած ջրով խաղողի  
 Լարիդ վրայ անցկացրու,

«Իէպի նորա աչքն ուղղիր,  
 Երկու ձեռքով միասին,  
 Այնպէս, ինչպէս մոշեպաշտ  
 Մարդիկ միայն կանէին:

«Աչքին, ժամի օգնութեամբ,  
 Նետը կերթայ քո շխտակ,  
 Կը կուրանայ ու բախտն էլ  
 Խիստ կը լարւի հակառակ»:

Յետոյ հրաժեշտ տւեց նա,  
 Հրաժեշտ՝ որ ջերմ էր այնքան,  
 Ջախն ու Սիմորդ լինէին  
 Կարծես առէչ ու թեզան:

Թռչունն ապա սրտուրախ,  
 Թեա՛հարեց դէպ վերև:  
 Տեսաւ նորան երբ Ռոստամ  
 Սաւառնելիս սրաթե,

Անմիջապէս պահանջեց

Մի վառ կրակ բոցաբերու,

Ու գնելով հուրի վրայ

Փայտը շտկեց մոշենու:

Երբ պատրաստուեց ուղէշն այդ,

— Ինչպէս տրւած էր պատուէր—

Վերան ամուր զետեղեց

Նա փետուրներն ու սլաքներ:



ՌՈՍՏԱՄ ՆՈՐԻՑ ԳՆՈՒՄ Է ԿՈՒԻ  
ՈՒ ԷՍՖԱՆԴԵԱՐ ՍՊԱՆՒՈՒՄ Է



Նոյն ժամանակ լեռներից,

Խուրճը ծլեց լոյսերի,

Որի դիմաց կորացաւ,

Մէջքը մռայլ գիշերի:

Հագաւ Ռոստամ անյապաղ

Իր զրահն ու սարք ուղղական,

Նաև յաճախ Արարչի

Անուէն յիշեց սրբազան:

Իր փղակազմ, ամենի

Զիւռ վերայ բարձրացաւ,

Գնաց, ինչպէս կը գնար

Կապոյտ ծովում շքեղ նաւ:

Երբ որ հասաւ վերջապէս

Համբաւաւոր բանակին,

Էսֆանդեարից կուի մէջ

Ոին անսելու իր նախկին,

Գլուխը վերև բարձրացրեց  
Ռոստամ արդէն ոչ տնճար,  
Եւ նախաախնք կարգալով՝  
Չայն արձակեց աղբարար:

«Ո՛վ քաջ սուլուծ, մինչև երբ  
Քնած մնաս մեղկութեամբ,  
Ելի՛ր, քանզի Ռոստամն արդ  
Ռախշի վերայ դրեց թամբ:

«Փափկափետուր անկոշնից  
Գլուխըդ վերև բարձրացրու,  
Մենտմարախ պտտրասուի՛ր  
Ռոստամի հետ վրիժառու»:

Գոչը նորա բարձրածայն  
Երբ որ լսեց էսփանդեար,  
Արհամարհեց աշխարհի  
Քաջերն ամէն ռազմավար:

Փոշոթանին ասաց նա,  
«Թէ առիւծն էլ չէ կարող  
Կախարդի դէմ պահպանել  
Անախտութիւնն անփոփոխ:

«Չէի կարծում, որ երէկ  
Կարողանար իր ճամբին,  
Ռոստամ քարշ տալ մինչև տուն  
Չրասն ու վագրի իր մորթին:

«Նորա հեծած հէնց Ռախշն այն,  
Այդ ձին հուժկու և զօրեղ,  
Իմ նեաերից մարմնի վրայ  
Չունէր բնաւ մի բաց տեղ:

«Լսել եմ ես, որ Դաստան,  
— Կախարդապաշտ ծերունի—  
Երկրից մինչև արեգակ,  
Ամէն բանում ձեռ ունի»:

Արտասուալից աչքերով  
Պատասխանեց Փոշոթան,  
«Ոստիներիդ թող լինի  
Բաժինը քո տխրութեան:

«Ի՞նչ է կզել, որ խամբած  
Թու՛ւմ ես ինձ գու աչդպէս,  
Մի՛թէ գիշերն այս բոլոր  
Աչքդ քնով գոցել չես:

«Ես չը գիտեմ աշխարհում  
Ատելութիւնն այս ինչ էր,  
Որ մեզ պիտի այսքան շատ  
Բերէր տանջանք ու ցաւեր:

«Ես չը գիտեմ թէ որի  
Բախտն է արդեօք յանցաւոր,  
Որ մեր ընդդէմ շարունակ  
Որս է ծընում նորանոր»:

Հագաւ իր զրահն ու իր սարք  
Գոռ Էսֆանդեարն արքազուն,  
Եւ շտապեց հանդիպել  
Ախոյեանին մեծանուն:

Երբ Ռոստամին տեսաւ նա,  
Գոչեց ձայնով խրոխտալից.  
«Թո՛ղ քո անունն յաւիտեան  
Զնշել երկրի երեսից:

«Այնպէս որ դու իմ ձեռքից,  
Երէկ հաղիւ դուրս պրծար,  
Ոչ ունէիր խելք ու սիրտ,  
Ոչ էլ կեանքի մի պաշար:

«Դու, ս՛ղ Սազգի, մտացա՞ր  
Քանի ժամում այդքան կարճ  
Քո դէմ կանգնած հերոսի  
Հզօր ազեղն ու կապարճ:

«Գնացի՞ր սպա սարքեցիր  
Կախարդութիւն դու մի նոր,  
Եւ յիս դարձար, որ իմ դէմ  
Մենամարտնս դու այսօր:

«Առողջացա՞ր այսպէս շուտ  
Շնորհիւ Զալի մոգութեան,  
Մարմինդ, այնինչ, չէր փնտռում  
Թէ ոչ միայն գերեզման:

«Այնպէս իմ սուր նետերով  
Կարեմ մարմինըդ բոլոր,  
Որ կախարդանքն ազարդիւն  
Դառնայ Զալի ալետր:

«Այնպէս պիտի փշրեմ այժմ  
Այդ ողնաշարդ աննկուն,  
Որ կենդանի չը տեսնէ  
Զալը նորից իր սրբուն»:

Տւեց Ռոստամ այսպիսի  
Էսֆանդղեարին պատասխան,  
«Ո՛վ ծարաւից անյազուրդ  
Պատերազմի և արեան,

«Ես չեմ եկել վերստին  
Մարտնչելու քեզ ընդդէմ,  
Այլ որ ներում քեզանից  
Եւ հաշուեթիւն աղերսեմ:

«Տիեզերքի, երկնչի՛ր,  
Ասուածանից սրբազան,  
Եւ մի՛ շինիր սիրաւ քո  
Իմաստութեան դամբարան:

«Վճռել ևս դու որ իմ դէմ  
Մի վէճ սարքես անարդար,  
Խոհեմութեան աչքերն էլ  
Գոցես զխտմամբ և խսպառ:

«Վըկանյ արդար Զըրադաշտ,  
Վըկանյ մեր կրօնքը բարի,  
Տաճարն Աղէր, Նուշաղէր,  
Եւ Տէրն անճառ փառքերի,

«Վըկանյ մեզ Զանդն ու Աստան,  
Վըկանյ լուսին, արեգակ,  
Գէպի կորուստ ևս դիմում  
Ճանապարհով խոտորնակ:

«Քօսքիս վերայ լըջօրէն  
Չես մտածի բընաւին,  
Եթէ նոյն իսկ պատառեմ  
Մարմնիս վերայ իմ կաշին:

«Ե՛կ, որ տեսնես սեղանն իմ,  
Եկ, որ տեսնես տունըս ճոխ,  
Պահանջն ամէն քո քիմքի  
Լինի հողուս հրամայող:

«Պիտի բանամ վաղեմի  
Գանձարանիս փականքներ,  
Ուրտեղ դիզել եմ շատ բան  
Չին օրերից ևս ՚իվեր:

«Ես կըրեռնեմ բոլորն այդ  
Գըրաստներիս սեփական,  
Որ դու յանձնես, և տանէ  
Քո գանձապահ մի ծառան:

«Յետոյ քեզ հետ միասին  
Ամբողջ ճամբան կըզամ ես,  
Կերթամ նաև շահի մօտ,  
Եթէ դո՛ւ ինձ արտօնես:

«Թէ Շահն ապա հրամայէ  
Ինձ ըսպանել, թո՛ղ լինի.  
Լինի նոյն խակ եթէ ինձ  
Յանձնել ուղէ զնդանի:

«Միտ բեր մի խօսք մեզ հասած  
Նախնի խելօք մարդկանցից,  
Չարագուշակ ասողի հետ  
Չիցէ ոչ սք զուգակից:

«Մի բան կանեմ, որ քանի  
Արևն ունի մի թաւար,  
Կուից այնպէս զղես դու,  
Որ անուեն խակ չուղես տար:

«Ինչո՞ւ դարձել է արդեօք  
Միրաբղ կողիտ ինչպէս քոր,  
Եւ չէ ուզում, եթէ ոչ  
Պատերազմել անդադար:

«Վկայ լինի թո՛ղ Աստուած,  
Որ այս կուից անիրաւ  
Եթէ ուղես հրաժարելի,  
Դու կըստանաս մեծ համբաւ»:

Պատասխանեց Էսփանդեար,  
«Սարէութեան մարդ չեմ ես  
Երբ օրն հասնի գրոհելու  
Դէպի մարտի ասպարէզ:

«Ի՞նչ ես այդպէս հորովում  
Քո ճօխ սեղանն ու էյվան,  
Ի՞նչ ես այդպէս լւանում  
Ինձ մօտ երես հաշտութեան:

«Եթէ ուղես որ մնաս  
Կանգնած տեղը կենդանի,  
Պէտք է շղթաս իր վերայ  
Քո պարանոցն ընդունի»:

Նորից բերան բանալով  
Տւեց Ռոստամ պատասխան,  
«Ե՛կ, այս մարտից յանցաւոր  
Դու ձեռք լա՛ յաւիտեան:

«Ո՛չ կեղա ուղիր իմ անւանս  
Ու ո՛չ կեանքիդ՝ պատուհաս,  
Այս մաքառից դուրս չի գայ  
Թէ ոչ միայն մեծ փաստ:

«Արքայական գահարներ  
Հազարներով քեզ կըտամ,  
Կը նւիրեմ քեզ նաև  
Թագեր, զարդեր և զըրամ:

«Մանկլաւիկներ շրթանուշ  
Քեզ կընծայեմ հազարներ,  
Որոնք պատրաստ քո սպասին  
Կանգնեն ցերեկ ու գիշեր:

«Աղախիններ թալլախի  
Կը պարզեմ քեզ հազար,  
Քանզի արժան ես թագի,  
Արժան կեանքի բերկրարար:

«Ի՛նչ որ գանձեր կան թողւած  
Սամ, Նարխմանն ու Չալից  
Պիտի բանամ քո առաջ,  
Քո, որ չունիս գուգակից:

«Կըհաւարեմ ես քո շուրջն  
Իւրաքանչիւր մի սաղմիկ,  
Քարոյտտան աշխարհից  
Իերել կըտամ ես մարդիկ:

«Որ քեզ լինին ամենով  
Իբրև ըստրուկ հընազանդ,  
Եւ կուի մէջ, թշնամուդ  
Լինին պատիժն ու վարդանդ:

«Ապա քեզ հետ միասին  
Ամբողջ երկար այս ճամբան,  
Արքայի մօտ սխակալ  
Կերթամ որպէս քո ծառան:

«Ատելութեան, աէր, արքայ,  
Վանիբր ամէն մի հակում,  
Եւ թոյլ մի տայ որ մանէ  
Դեք, դարան քո սրտում:

«Կապանքից դատ՝ ինչ ուզես  
Արն ինձ հետ անվարան,  
Քանզի դու ես ծագումով  
Եագղանսապաշտ իմ արքան:

«Քո կապանքից յաւիտեան  
Ինձ կըմնայ վատ անուն,  
Զի վայելի յոռի գործ  
Քո պէս հերոս մի մարդուն»:

Այսպէս նորից Ռոստամին  
Պատասխանեց էսֆանդեար.  
«Իդուր խօսքեր մինչև երբ  
Պիտի կրկնես շարէշար»:

«Ճանապարհից Աստուծոյ,  
Ո՛վ մարդ փորձեաժ, երկրատես,  
Այն է շահի հրամանից  
Ասում ես ինձ, շեղւիմ ես»:

«Քանզի Շահի հրամանից  
Ով որ շեղել ուզենայ,  
Նոյնն է ինչ որ Ասածոյ զէմ  
Կեղծիք գործած լինի նա»:

«Մի որոնիր ուրիշ բան  
Թէ ոչ կոխ կամ կապանք,  
Եւ զէն ձգիր դու ընդ միշտ  
Քո այդ յանդուգն աղճատանք»:

Երբ որ Ռոստամ ըմբռնեց,  
Թէ աղաչանքն իւր կրբեք  
Էսֆանդեարի մօտ չունի  
Ազդեցութիւն և արժէք»:

Զայն արձակեց և ասաց,  
«Կոչիր որ դայ Փռչութան,  
Եւ այս դէպքի ընթացքում  
Լինի անսուտ իմ վըկան»:

«Տեսնէ լի է ես ինչքան շատ  
Աղաչ-պաղատ եմ անում,  
Զարած ոչինչ յանցաւոր,  
Խնդրում եմ միշտ ես ներում»:

«Թէ ես առիթ չեմ տուի  
Մրցամարտի քինալից,  
Թէ ես կրես չեմ թեքել  
Սրբադաւան իմ կրօնքից»:

Բարձրը ծիծաղ արձակեց  
Այս խօսքի վրայ էսֆանդեար,  
Ու այս ասաց, «Լսիր ինձ,  
Ո՛վ անւանի ուղմարար»:

«Ի՞նչ էս պատրւակ որոնում,  
Ժամն է մինչդեռ գրոհելու,  
Կեղծիքներով սնամէջ  
Ու խաղերով ձեռնածու:

«Մօտիկ է մեզ Փոշութանն,  
Ու նա զխոէ ամէն բան,  
Եւ նա անշուշտ կը պատմէ  
Եղելութիւնն իսկական»:

Ապա իսկոյն ձայն տւեց,  
Ու Փոշութանն երևաց,  
Ռոստամ, նորան տեսնելով,  
Մնաց իսպառ զարմացած:

Այսպէս, սակայն, նորա մօտ  
Բացաւ սիրտն իւր վշտալի,  
«Ո՛վ դու սրտով անազարտ  
Եւ մեծութեամբ՝ պանծալի,

«Էսֆանդեարին սեղեցի  
Խնդիրք, ազերս էս անբաւ,  
Իսկ նորա մօտ բոլորն այդ  
Ո՛չ մի կշիռ չունեցաւ:

«Հնազանդութիւն յայտնեցի,  
Եւ դու տեսար ու զխոս,  
Որ չընդունեց, ու կհանքից  
Ձեռք է քաշել նա կարծես:

«Եթէ այսօր իմ ձեռքով  
Այստեղ փուխ նորա զին,  
Դու, մեր վկան, իմ կողմից  
Գնան, պատմի՛ր բոլորին,

«Ռոստամն, ասան, պաղատեց,  
Նոյն իսկ ողբաց շատ ու շատ,  
Արդիւնք, սակայն, չը տւեց  
Այս մարդու մօտ պայազատ»:

Ձայն արձակեց Ռոստամին  
Մենամարտիկն էսֆանդեար,  
«Երկար բառեր ու ճառեր  
Պէտք չեն այլևս ինձ համար:

«Ե՛կ որ տեսնեմ ինչ ունիս,  
Որպէս ռազմիկ քաջազուն,  
Քանզի շատ էս աշխարհում  
Փնտռել պատիւ և անուն»:

Երբ որ Ռոստամ լսեց արդ  
Մարտահրաւէրն այդ հուժկու,  
«Ժամը հասաւ», խորհեց նա,  
«Արդէն ղէնքի դիմելու»:

Իսկոյն ապա ամրացրեց  
Լարն իր հզօր պղկի,  
Եւ այն մոշին, որին ջուր  
Տւել էին խազողի,

Լարի վերայ գրեցան,  
Լարի վերայ ահաւոր,  
Ասաց, գըլուխն իր բռնած  
Դէպի բարձունքն երկնաւոր,

«Ո՛վ արևի ու լուսնի  
Արդարադատ դու Ասուած,  
Ո՛վ պարզեղով անաչառ  
Ոյժի, խելքի և փառաց,

«Քեզնից, Տէր իմ, չէ թաքուն,  
Անրիժ խորհուրդն իմ ներքին,  
Տեսնում ես դու նաև իմ  
Կարողութիւնն ու հողին».

«Տեսնում ես դու թէ որքան  
Մեծ ճիգ ու ջանք գործ դըրի,  
Որ յետ պահեմ այս կուից  
Էսֆանդեարին քաջարի,

«Թէ այս դաշտում անարդար  
Գուն է գործում ապարդիւն,  
Եւ ինձ ծախել է ուղում  
Տղամարդու քաջութիւն»:

«Մեղք ինձ համար մի սեպիր,  
Բազաֆարէն թէ սիրես,  
Դու որ ստեղծել ու պահել  
Գիտես լուսին ու Հերմէս»:

Երբ որ տեսաւ Ռոստամին  
Վարանեկի շարունակ,  
Որ դիմելու 'ի ճակատ  
Յոյց չէ տալիս ախորժակ,

«Ռոստամ», գոչեց, «որ ունիս  
Անվախութեան մեծ համբաւ,  
Կարձես հանգել է խաղառ  
Մարտնչելու քո ծարաւ»:

«Կը տեսնես արդ Գոշասարի  
Ի՛նչ է սըլաքն յարամուր,  
Թէ ո՛ւմն է սիրա առիւծի,  
Եւ Լոհրասարի նետը սուր»:

Եւ արձակեց Ռոստամի  
Մաղաւարտին նա մի նետ,  
Մի նետ, արժան բաղուէկին  
Ասպետների սաղմաղէս:

Դըրեց մտչին լարի վրայ  
Կարիճ հերոսն անվեհեր,  
Այնպէս, ինչպէս Սիմորդից  
Դաս ու հրամանն նա ունէր:

Ջարկեց նետովն այդ անշեղ  
Էսֆանդեարի աչքերին:  
Աշխարհն ամբողջ սեպտաւ  
Քաջի համար արքտածին:

Էսֆանդեարի աչքն երկու  
Կարեց նետով երկձայրի,  
Ատելութեան բոցն հանգաւ,  
Երբ որ վառեց դա կարի:

Մէկ անգամից կորացաւ  
Նոճի հասակն ուղղամբարձ,  
Փառք ու պատիւ նորանից  
Հրաժարեցան, եւ անդարձ:

Եաղղանապաշտ իշխանի  
Գըլուխն իջաւ թագակիր,  
Ձեռքիցն ընկաւ գետնի վրայ  
Կորակամար աղեղն իր:

Բաշը բռնեց սև ձիու  
Յայտօր անյաղթն ախոյեան,  
Դաշտը ներկեց գուպարի  
Կարմիր, որպէս կարկեհան:

Էսֆանդեարին այս ձևով  
Խօսքերն ուղղեց իր Ռոստամ,  
«Որո՞մն այս ժանտ քո ձեռքով  
Պտուղ բերեց գարշահամ:

«Ասում էիր թէ ունիւ՞մ  
Պողպատակուռ մի մարմին,  
Պիտի խլեմ ու զարկեմ՞  
Վերին երկինքը գետնին:

«Կերայ ես ցարդ քո ձեռքից  
Հարիւր սլաք ու վաթսուէն,  
Եւ «ախ» անգամ չասացի,  
Որ չազարուի իմ անուն:

«Մէկ հաս նետով աննշան  
Կուի դաշտից յետ դարձար,  
Ձիուդ մէջքին փուեցիր  
Երեսի վրայ դու խոնարհ:

«Կերար միայն իմ ձեռքից  
Մոշու փայտից մէկ հաս նետ,  
Ու գլուխ թամբին իջեցրիր,  
Ո՛վ երկաթեայ ուղմապետ:

«Կը թաւաւի հողի մէջ  
Հիմա այդ գլուխդ աննկուէն,  
Որ լսելիս խորովի  
Սիրտը քո մօր սիրասուն»:

Անւանակիր իշխանի  
Մարմինն հէնց այդ ժամանակ  
Գետնի վրայ փուեցաւ  
Ձիու մէջքից սևորակ:

Այդպէս մընաց մինչև որ  
Իր ուշքը յետ ըստացաւ,  
Ապա զեանին նստելով,  
Լսելիքն իւր նա ըացաւ:

Բռնեց դաստակը նետի  
Ու դուրս քաշեց վէրքիցն իւր,  
Փետուր ու սլաք աչքերից  
— Արդ արնահոս զոյգ աղբիւր:

Նոյն ժամանակ Բահմանին  
Բօթ հասցըրին թէ իսպառ  
Շահնշահի խաւարեց  
Շուքն ու պարծանք մեծափառ:

Եկաւ Բահմանն և ասաց  
Փոշութանին երբ հասաւ,  
«Թէ մեր կուին զուգակցեց  
Անասելի մի մեծ ցաւ:

«Փղի նման մեր հական  
Դարձաւ հողի հաւասար,  
Եւ դամբանի փոխարկեց  
Աշխարհն ամբողջ մեզ համար:

Անմիջապէս վազեցին  
 Զօրքի միջից երկոքեան,  
 Մինչև հասան դըռան մօտ  
 Փահլավանի բնակութեան:

Նստած գտան ռազմիկին,  
 Եւ շուրջն ամէն՝ արնամած,  
 Զեռքում բռնած մի հատ նետ,  
 Այն էլ արեամբ թաթախւած:

Բանմանն անբախտ հողի մէջ  
 Ընկաւ թաւալ ու գըլոբ,  
 Քըսում էր դէմքն արիւնին  
 Արքայազնի վիրաւոր:

Այսպէս ողբաց Փոշութան,  
 «Ո՞ւմ է արդեօք դա յայտնի,  
 Թէ ինչ գաղտնիք կայ կապած,  
 Բախտին մարդկանց անւանի,

«Թէ ոչ միայն Արարչին  
 Երկինքների և հողու,  
 Թէ ոչ Աստծուն աշխարհի  
 Եւ հոյկերի լուսատու:

«Էսֆանդեարն այս, որ կրօնի  
 Դ պանծացում և ի սէր,  
 Բերեց, որպէս տղամարդ  
 Բազուկ ՚ի սպաս և սուսեր,

«Սրբեց երեսն աշխարհի  
 Կուռք պաշտելու դարշանքից,  
 Ոչ մի գործի անիրաւ  
 Զեղաւ երբեք մասնակից,

«Երիտասարդ հասակում  
 Դարձաւ նախճիր նա մահւան,  
 Եւ խոնարհեց մինչև հող  
 Գլուխը նորա թագարժան:

«Աշխարհն համայն սգահար՝  
 Նորան հասած չարիքից,  
 Սիրան ազատի խորապէս՝  
 Նորա ցաւին ցաւակից:

«Զարագործի վերայով  
 Կանցնի, կերթայ բազում օր,  
 Եւ այդ յոռին եղկելի  
 Օր չի տեսնի բախտաւոր»:

Երիտասարդն այն երկու  
 Գլուխը գրկած իշխաննի,  
 Մաքրում էին փափկութեամբ  
 Ամէն հետքերն արիւննի:

Լաց էր լինում Փոշուխան,  
 Ողբ էր կարգում արամալեց,  
 Այտի վերայ՝ յորդ արիւն,  
 Ու սրտի մէջ՝ լի կսկիծ:

Ատում էր դառն հառաչով.  
 «Ո՛վ էսֆանդհար քաջարի,  
 Աշխարհակալ և սերունդ՝  
 Աշխարհիշխան հայրերի,

«Ո՛վ էր արդեօք որ տեղից  
 Քանդեց հսկայ այս լեռան,  
 Եւ ո՞վ գամեց գետնի հետ  
 Այս առիւծին որոտան:

«Ո՛վ էր արդեօք որ կոտրեց  
 Փղի ժանին հրաշալի,  
 Եւ շարտեց նեղոսի  
 Զրերի մէջ բազմալի:

«Ո՞ր մարդն արդեօք մթնացրեց  
 Արեգակին փառաւոր,  
 Ո՞վ արքային բարձրազլուխ  
 Դարձրեց այսքան գլխակոր:

«Ո՞ր մարդն արդեօք հանգրեց  
 Ճըրագն այս վառ և ուրախ,  
 Եւ մարելով հրկիզեց՝  
 Ամբողջ բարօր մի օջախ:

«Ի՞նչ էր արդեօք որ հասաւ  
 Այս մեծ զարմին աչքից չար,  
 Նորան չարիք բերողին  
 Չարիք կը գայ անհամար:

«Ո՞րտեղ արդեօք հեռացան  
 Քո սիրտ, քո միտք ու զարդարք,  
 Քո կրօն, քո աստղ լուսասփիւռ,  
 Եւ սխրագործ քո արարք:

«Ո՞րտեղ արդեօք չքացաւ  
 Ռազմադաշտում տեսքըդ քաջ,  
 Ինչո՞ւ լոնց խնջոյքում  
 Շեշտը ձայնիդ գիւրաւաչ:

«Մաքրում էիր երբ աշխարհն  
Ամէն ոքից անիրաւ,  
Ո՛չ առիւծից, ո՛չ դէից  
Վախ չունէիր դու բնաւ:

«Այժմ որ բոլոր աշխատանքդ  
Օգուտ պիտի պտուղ տար,  
Հողն եմ տեսնում քեզ դարձած՝  
Մննդատու խնամատար:

«Թո՛ղ նըզովւած յաւիտեան  
Լինին այդ դահն ու այդ թագ,  
Թո՛ղ չը մնայ գորանցից  
Երկրում ո՛չ մի յիշատակ:

«Որո՞նց համար քեզ նըման  
Ասպետ, արքայ սագմարար՝  
Ընկած է արդ հողի մէջ  
Ոգորմելի և խոնարհ:

«Արժէ կնեսս ու գընասս  
Թէ թագ, թէ դահ, ամէն բան  
Խլես, փշրես սաքիդ տակ  
Գոշտասր Շահից դաւաճան»:

Այսպէս ասաց Էսֆանդեար  
Իմաստալից իր խօսքեր,  
«Ո՛վ մարդ, բախտից անբաժին,  
Խեղքից, սակայն, բաժնատէր,

«Պէտք չէ այդքան լինիս դու  
Թշւառօրէն յըտակից,  
Քանզի հասաւ չարիքն այս  
Ինձ երկնքից ու լուսնից:

«Մարմնի համար մահացած  
Հողն է յարմար անկողին,  
Իմ ըստանման պատճառով  
Մի դու սըզար դառնաղին:

«Ո՛ւր է Հուշանդ, ո՛ւր է Զամ,  
Եւ ո՛ւր գնաց Ֆէրէյդուհ,  
Քամուց կկան բոլոր էլ  
Նորից դարձան նոյն քամուհ»:

«Հէնց այն նախնիքն իմ ամէն,  
Սերւած զարմից անբասիր,  
Հէնց այն ամբողջ սուրբերն իմ  
Վեհաճակաս և ընտիր,

«Քնացին ընդմիշտ ամենով  
Ու մեղ տւին տեղն իրանց,  
Ոչ ոք երկար չի մընայ  
Պանդոկատանն այս վաղանց:

«Աշխարհի մէջ ամէն տեղ  
Շատ եւս պտոյտ արել ես,  
Շրջել եմ մերթ բացայայտ  
Եւ մերթ շրջել գաղտնապէս:

«Որ չըթողնեմ ոչ ոքի  
Աստուծոյ ճամբին անհաղորդ,  
Դատողութիւնն էլ բերեմ  
Դաւանանքին առաջնորդ:

«Երբ որ այս գործն իմ ձեռքով  
Դարձաւ հզօր ու պայծառ,  
Երբ որ կապեց չարանենդ  
Ահրիմանի ձեռքն խալառ:

«Ճակատագիրն հանեց դուրս  
Թաթն առիւծի ահաւոր,  
Եւ իմ, որպէս վայրէջի,  
Փշրեց ամէն մի ոսկոր:

«Բայց յոյս ունիմ, որ յետոյ  
Բնակարանում դրախտային,  
Պիտի, ինչ որ ցանեցին,  
Հնձեն իմ սիրտն ու հոգին:

«Ինձ, ոչ որպէս տղամարդ,  
Յաղթեց որդին Դաստանի-  
Նայիր ու տես բըռիս մէջ  
Մի աննշան մոշենի:

«Վախճան դըրեց իմ կեանքին-  
Փայտի չնչին մի կտոր,  
Շնորհիւ, սակայն, Սիմոնդի  
Եւ Ռոստամի նենգաւոր:

«Զալն է սարքել այս խաղեր  
Եւ հըմալքներ դըժընդակ.  
Այդ հնարքներին, աշխարհում  
Նա է միայն հեղինակ»:

Երբոր ասաց, վերջացրեց  
Այս պատմութիւնն էսֆանդեար,  
Գալարեցաւ ու լացեց  
Ռոստամը խիստ վշտահար:

Յկաւ իսկոյն մերձեցաւ  
Էսֆանդեարին վերաւոր,  
Նորա ցաւին՝ ցաւակից,  
Նորա համար՝ սգաւոր:

Փռշուժանին ասաց նա  
Միրտը մի ծով տիրութեան՝  
«Յիշել մարդուն քաջագործ  
Քաջին է լոկ սաղական:

«Ինչ որ ասաց Էսֆանդեար  
Ճիշտ է բոլորն և ուղիղ,  
Նա, իր ճամբից առնացի,  
Չընկաւ դէպի ծուռ շաւիղ:

«Այն կայ միայն որ կեանքում  
Դևի ձեռքով նենգաբար,  
Բաժինն է իմ սահմանւած  
Տանջանք կրել անդադար:

«Քանի կապել եմ մէջքիս  
Տըղամարդու մի գօտի,  
Ու հօրնեքին դիմագրաւ  
Դուրս եմ եկել ես մարտի:

«Էսֆանդեարին հաւասար  
Ես չեմ տեսել ձիաւոր,  
Զինախաղաց, զրահազգեսց  
Եւ գրոհելիս՝ ահաւոր:

«Նորա կուից երբ դարձայ  
Յուսահատւած, իսելայիղ,  
Տեսայ նորա թափն և ոյժ,  
Նորա բազուկն և աղեղ,


«Ես յոյս ու ելք փնտոեցի  
Դարձած իսպառ յուսակտուր,  
Մէկ անգամից չուզեցի  
Լինել նորան անձնատուր:

«Զետեղեցի իմ լարում  
Նորա կենցաղն առնացի,  
Եւ երբ պատեհ ժամն հնչեց,  
Նորան գետին փռեցի:

«Եթէ լինէր օգտակար  
Բախար նորան և այսօր,  
Ո՞ւրտեղ պիտի գործի վար  
Մռշու փայտի մի կտոր:

«Այնքան կայ սոսկ, որ մնաց  
Ինձ այս բանից վատ նշան,  
Եւ այս մոշու նեախ հետ  
Անուհս անցաւ պատմութեան»:





700



ՀՀ Ազգային գրադարան



NL0506339